№ 233 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ“

Լրագիրը արժէ 2 բուբլի։ Մի ամսվանը 1 բուբլի։

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“

Արմենական-բազար տուն Զուլուխանէի 2-րդ յարկ

Վաճառվում հնետեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թողվում են առ մատչելի գներով։

առ. Հ. Է. 16—20

ԾՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը յայտարարում է, որ արդէն ստացված է «ԳԵՂՈՒՆԻ»։ Ու այժմ ստացված են 300 օրինակ։ Բոլոր 1000 օրինակներից գոյացած արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները՝ ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գայլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն՝ ուղարկելով գինը 4 ր. և ճանապարհածախքի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կ., դիմելով կամ «Մշակի» խմբագրատունը, Ցանձնաժողովի անդամ-քարտուղար պ. Հ. Առաքելեանին, «Գուատեռբերդ» զրավաճառանոցը կամ «Երկրի» խմբագրատուն իսկ ԲՈՒԴՈՒՄ ցանկացողները կարող են ստանալ Թ. Բունեաթեանի զրախանութից, հայոց եկեղեցուն կից։

առ 4—5

ԼԱԿՏՕՐԱՅԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՕՖ. ՄԵՂՈՒԿՈՎԻ

Ցուցմունքների համար պատասխանում է

ԳՐՕՎԻԶՕՐ

Ա. Ս. ԿԼԷԲԱՆՍԿՈՒ

Քիմիկո-բակտերիոլոգիական կաբինետում, Վլադիմիրովի արձանի դիմաց։

Հեռախօս № 389.

(Ե. Չ. Հ. ու. Կ.) առ. յ. կ. 2—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Տեղափոխվեց Միքայէլեան փողոց № 27.

Ընդունելութիւն ներքին և ջղային հիւանդութիւնների. առաւօտեան 9—11 ժ. երեկոյան 5—7 ժամը։

առ 4—5

Հայուհեաց Որբանոցաւոր Ընկերութեան

վարչութիւնը, ի նկատի ունենալով որբանոցի շուտափոյթ բացման անհրաժեշտութիւնը՝ խնդրում է հայ հասարակութեանը չը զլանալ իր անյապաղ օգնութիւնը։ Նուիրատուները և անդամ գրվել ցանկացողները կարող են դիմել երեքշաբթի, շաբաթ և կիրակի օրերը, ժամը 10-ից մինչև 2-ը հետևեալ հասցեով. Բէհբութ. փող. տ. № 33, նախագահուհի օր. Ս. Բայսողլեանին։ Իսկ նուիրատուութիւն ընդունում են «Երկրի», «Մշակ» և «Т. Г.» թերթերը։

3—3

Երդուեալ-հաւատարմատար

ՍԱՄՍՈՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

Գրիբոյեդովսկայա փողոց, տուն № 23, տելեֆոն № 965.

առ. (Չ. ու. Կ.) 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անընական կալի մէջ. Վերջին տեղեկութիւններ. Կուսակցութիւնների շուրջը. Մոսկվայի համալարանի փակումը, կեղծիքներ. Դարձեալ Տեղ գիւղի դէպքի մասին. Բաւական է. Կանանց բարեգործական երկու նոր ընկերութիւններ. Ո՞վ էր կազմակերպում ջարդերը. Մ. Հերցէնշտէյնի այրիի նամակը. 1905 թի հոկտեմբերի 13-ը. Ներկայացուցչական կառավարութիւն. Հիրօմակիպ կոնստանտինովի. Տեղ գիւղի դէպքի քննութիւնը. Պատմական փաստեր և բացատրութիւններ. Թատրօն և երաժշտութիւն, Պէտք է կազմակերպվել. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆԻՆԱԿԱՆ ԿԱՊԻ ՄԷՋ

I

Նորից յարութիւն է առել մի հարց, որ մի քանի տարի սրանից առաջ դրված էր քննութեան սեղանի վրա և ստացել էր պաշտօնական բնաւորութիւն։ Դա այս պարվայ աղէտին ենթարկված շրջաններից մէկի վարչական կազմութեան հարցն է։

Զանգեզուրի գաւառի հեռաւոր մասերից մէկը, այն է՝ Արևիքը կամ Մեղրիի շրջանը, վաղուց է, որ ձգտում է ժեշտութիւն է զգացվում բարեփոխութիւններ մտցնել զարշական բաժանումների մէջ և պէտք է մշակել բարեկարգութեան ծրագիրներ։ Բայց Արևիքի հարցը չափազանց հասունացածներից մէկն է և կարեորութիւն չը կայ նրան նորից ուսումնասիրելու։

Հարցը պարզ է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խարկով, հոկտեմբերի 23-ին

«Էրմիտաժ» և «Լօնդօն» հիւրանոցներում կանաչուրվեցին 4 հայեր, որոնք ապրում էին կեղծ անցագրերով։ Նրանք եկել էին զէնքեր գնելու համար։ Նրանցից մէկը քաղաքային բանկում ունեցել է 5000 բուբլի։

(«Հեռ. Գործ.»)

Արէշի գաւառի Աղդաշ աւանից հաղորդում են հետևեալ դէպքի մասին, որ տխուր վախճան է ունեցել այն եկեղեցաւարակների համար, որոնք ամ ու ամսապէ էին տարածել ամբողջ գաւառի ազգաբնակութեան վրա։ Քեօրֆիքենդցի յայտնի փախստական Մեջիդ Մամեդ-օղլին, որ անցեալ տարի աւերել էր եղբ. Գեանջուցնեանների կալուածքը, մի ինչ որ բանի համար կռուում է իր եղբօր Ուղուրլի հետ, որը նոյնպէս փախստական է։ Այդ կռուի միջոցին Ուղուրլին բերդան հրացանից կրակում է Մեջիդի վրա և անշուշտ կը սպանէր նրան տեղնուտեղը, բայց մի ուրիշ փախստական՝ Զալալ Մուստաֆա-օղլի, բռունցքի հարուածով զէն է հրում հրացանի փողը և գնդակը թռչում է օդում։ Այն ժամանակ կատաղութեան հասած Ուղուրլին մերկացնում է դաշոյնը և մի քանի հարուածներով սպանում է Զալալին, բայց ինքն էլ տեղնուտեղը սպանվում է իր եղբօր Մեջիդի ձեռքով։ Այդ լուրը մեծ հանդատութիւն է պատճառել տեղական ազգաբնակութեանը... Գոնէ երկու աւազակ էլ պակասեց։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հոկտեմբերի 14-ին կայացել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեի նիստը Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների առիթով։ Որոշված է կազմել իրաւաբանական մի մասնաժողով, որը «Право» լրագրի խմբագրութեան միջոցով բացատրութիւններ տար ընտրողական օրէնքների մասին ծագող հարցերի վերաբերմամբ։ Կուսակցութիւնը մի այդպիսի մասնաժողով էր կազմել առաջին ընտրութիւններից առաջ ևս, ինչպէս վկայում են ստացված բազմաթիւ նամակները, գործնական ահագին օգուտներ։ Ուրեմն և մեծ աջողութեամբ մաքառել ապմինիստրացիայի կողմից գործ դրված բազմաթիւ սահմանափակումների դէմ։ Մօտ օրերս կայանալու է ժողովրդական ազատութեան կուսակցութեան համակայսերական կենտրոնական կոմիտեի խորհրդի նիստը տեղական բոլոր կոմիտեների ներկայացուցիչների մասնացութեամբ՝ խորհրդակցելու ընտրողական գործի ներկայ դրութեան և ընտրողական հրահանգ մշակելու մասին։ Կուսակցութեան նոր համագումար հրաւիրելու հարցը առ այժմ բաց է մնում և կը լուծվի յետեալ խորհրդակցութեան մէջ։

—Ռուսաց սոցիալ-դեմոկրատական բանւորական կուսակցութեան կենտրոնական կոմիտեն շարունակ սպանում է գաւառական կազմակերպութիւնների որոշումները արտաքրդ համագումար հրաւիրելու հարցի առիթով, որի համար եռանդով աշխատում են Մոսկվայի և Պետերբուրգի քաղաքային կոմիտեները։ Վերջին ժամանակներս համագումարին ընդդէմ կարծիք են յայտնել Իվանովո, Վիտեբի, Խերսոնի, Խարկովի շրջանները և Սմոլենսկի կազմակերպութիւնը։ Համակարծիք է համագումարի պահանջին Սարատովկի և Կուրսկի հանանգները։

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓԱԿՈՒՄԸ

Զը նայելով որ ուսանողական ժողովը որոշում էր կայացրել երեք օր գործադուլ անելու մասին, բայց և այնպէս հոկտեմբերի 18-ին ուսանողները համալարան են հաւաքվում դասախօսութիւնները սկսվելու ժամանակ։ Թէև ուսանողների մի մասը կարգալով մուտքի վրա կպցրած Կենտրոնական Մարմնի յայտարարութիւնը հեռացաւ համալարանից, այնուամենայնիւ լսարաններում այնքան ուսանողներ էին հաւաքվել, որ պրոֆեսորները սկսեցին իրանց դասախօսութիւնները։ Այդ միջոցին պատմական-լեզուաբանական և մանաւանդ իրաւաբանական մասերի նրբանցքներում խմբվել էին այն ուսանողները, որոնք ուզում էին բռնութեամբ խանգարել սկսված պարապմունքները։ Այդ նպատակով նրանք թաղնում էին լսարանի դռները, բաց ու խուփ էին անում և այնպիսի աղմուկներ էին հանում նրբանցքներում, որ դասախօսութիւններ կարդալը անհնարին էր դառնում։ Պրոֆեսսոր Վիպպերի դասախօսութեան ժամանակ ուսանողներից մէկը, դասախօսութիւնը անլսելի դարձնելու նպատակով, սկսեց բառաչել, բայց դուրս վռնդվեց։ Գործադուլ անելու կոչին դասախօսութիւնը շարունակելու կողմնակիցները պատասխանեցին միահամուռ գոչումով. «դուրս!»։ Ժամի 11-ին դրութիւնը աւելի լարվեց։ Դասախօսութիւններից մի քանիսը բոլորովին չը կայացան։ Այն լսարանի մուտքի առջև, որտեղ պէտք է դասախօսէր պրոֆ. Ֆիլիպովը, բանը նոյնիսկ սուր ու դժգոհ հասաւ։ Նրբանցքներում սկսեցին ժողովներ անել, որի ժամանակ երդում էին խմբական երգեր՝ մասվան քայլերգ։ Փորձեր են եղել խանգարելու դասախօսութիւնները քիմիական և անասնաբանական լսարաններում։ Հէնց որ նրբանցքներում սկսվում են աղմուկները, իրաւաբանական բաժանմունքն են գնում համալսարանի բեկտորը և իր օգնականը, որոնք աշխատում են համոզել ուսանողներին չը խանգարել դասախօսութիւնները, բայց նրանց ջանքերը անցնում են բոլորովին ապարդիւն։ Նրանց պատասխանում են սուլոցներով, և ապմուկը վերսկսվում է։ Որովհետև անկարգութիւնները գնալով մեծ ծաւալ էին ստանում, այդ պատճառով բեկտորը վճռում է փակել համալսարանը, որի մասին ժամի 12 ½-ին յայտարարում է ուսանողներին ի գիտութիւն։

Անմիջապէս առաջարկվում է ուսանողներին հեռանալ համալսարանի շէնութիւնից, փակվում են դռները և խսկոն և եթ կախվում նրանց վրա հետևեալ յայտարարութիւնը.

«Ի նկատի առնելով համալսարանի պատերի մէջ հոկտեմբերի 18-ին կատարված անկարգութիւնները, յայտարարում եմ, որ համալսարանը փակված է մինչև հոկտեմբերի 30-ը։ Մինչև այդ ժամանակ նշանակված քննութիւնները և ուսանողական ժողովները չեն կայանալու։ Բեկտոր Մանուիլով»։

Բեկտորի այդ զրոյցը, ասում է «Р. В.» լրագիրը, ուսանողութեան անպէտ մեծամասնութեան համար բոլորովին անակնկալ բան էր։ Եւ, բնական է, որ նրանցից շատերի վրա այդ որոշումը ճնշող, չափազանց յուզիչ տպաւորութիւն գործեց։ Մեծ ներգործութիւն ունեցաւ այդ քանը համալսարանի կենտրոնական մարմնի վրա նոյնպէս, որը բեկտորի ուղղումից անմիջապէս յետոյ մի խորհրդակցութիւն գումարեց այդ առիթով և վճռեց առաջարկել բեկտորին՝ 1. փոխել համալսարանի փակման մասին արած կարգադրութիւնը և պարապմունքները սկսել հոկտեմբերի 23-ից և 2. եթէ այդ անհնարին է, թոյլ տալ ժողով գումարելու հոկտեմբերի 22-ին։ Նոյն խնդրի առիթով «Р. В.» լրագիրը բուսականաչափ նամակ է ստացել ուսանողներից, որոնք բողոք են յայտնում իրանց փոքրաթիւ ընկերների դէմ, որոնք ուսանողութեան մեծամասնութեան ցանկութիւնը՝ պարապվելու մասին, ոտնատակ են տալիս և իրանց օգտարուկիցներով պատճառ դառնում համալսարանի փակման։

ԿԵՂԾԻՔՆԵՐ

II

Տիրող անարգար կարգերի դէմ անհատական բողոքները այն ժամանակ են հասարակական հոսանքի բնոյթ ստանում, երբ այդ արտաքայտութիւնները նշանակի նման ծակում են ժողովրդի օրգանիզմը մաշող հասունացած ցաւագար պալարներ։ Ոչ մի զուտ անձնական հաշիւ, ինչքան և ճարպիկ լինի անհատը, չէ կարող առաջ բերել հասարակական շարժում, մի Թրէյֆուսի դատ չէր կարող խոր հասարակական երևոյթի նշանակութիւն ստանալ, եթէ Ֆրանսիայի կղերական-բիւրօկրատական անիրաւ կարգերը՝ մանաւորապէս զինուորական ատեանը՝ մինչ այդ հաղարաւոր անպայտ զրէյֆուսներ զոհած չը լինէին։ Ֆրանսիական շառի գժբախտութիւնից այդ վերջին Դրէյֆուսի գլխին «արդարադատութիւնը» կատարվեց այնպիսի պայմաններում և այնպիսի ժամանակ, երբ հասարակական ինքնագիտակցութիւնը նպատաւոր էր և այժ ունէր արտայայտելու աւելի ուժգին թափով, քան մինչև այդ։ Անարդարութեան և բռնութեան զոհեր, ինչպէս և բողոքներ առաջ էլ կային, բայց հզօր զինուորական շառին աջողվում էր, յենվելով կղերի, բիւրօկրատիայի և շովինիստների աջակցութեան վրա, լռեցնել թէ զոհի և թէ բողոքողի ձայնը։ Բայց, ինչպէս ռուսական առածն է ասում՝ «կատուի համար միշտ բարեկենդան չէ լինում»։ Եւ ահա վերջին Դրէյֆուսին չաջողվեց ոչնչացնել, ինչպէս և նրա պաշտպան կանգնած Զոլային, Կաբօրիին և միւսներին։ Զոլայի j'aceuse-ի շուրջ համախմբվեցին Ֆրանսիայի բոլոր շիտակ և առաջադէմ ոյժերը։ Լիբերալ, բադիկալ թէ սոցիալիստ կողքի տուած կռիւ յայտարարին անիրաւութիւնը ջատագովող շովինիստների, կղերականների և զինուորական բիւրօկրատական ինքնալականութիւնը պաշտպանողների դէմ։ Ճիշտ է, ժօրէսին չը հետևեց սոցիալիստ Դեղը, համարելով զրէյֆուսական պայքարը մի բուրժուական գործ. բայց մեծ հարց է թէ ով էր կեանքի պահանջները այդ դէպքում ճիշտ ըմբռնում—ժօրէսը թէ Դեղը, իր սոսկ դօկտրինիօրութեամբ... Հակադրէյֆուսականները կեղծում էին ամենը ինչ, նոյն իսկ վեհ դաղափարները և, միջոցների անխտրականութիւնը ուղեցոյց ունենալով, ուզում էին զոհել մի «որևէ Դրէյֆուս» «ազգի», «զօրքի», «հայրենիքի» հեղինակութեան և փառքին։ «Ի՞նչ կանեն օտարները դա ազգասիրութիւն չէ, դա դաւաճանութիւն է, մատնութիւն է» և այլն և այլն, ասում էին հակադրէյֆուսականները և գրգռում ֆրանսիական խուժանը Զոլայի և նրա համհարզների դէմ։ Սակայն ճշմարտութեան և արդարութեան հրամայողական պահանջը անընկճելի էր դարձնում դրէյֆուսականներին և նրանք քայլ առ քայլ մերկացրին անիրաւութեան և բռնութեան մանուածապատ հիւսուածքը և դրանով անգին ծառայութիւն մատուցին ֆրանսիական ապէի գիտակցութեան զարգացման։

Sapienti sat...

Մեր կեանքում վերջին տարիների ընթացքում, ժողովրդի բոլոր խաւերում, կատարվում էին դաշնակցական կոնդէսմերատի կողմից ամեն տեսակ անիրաւութիւններ և բռնութիւններ։ Մամուլի ազատութիւնը եղաւ ընդդիմադրական այն թոյլ գիծը, որով ժայթքից կատակված բողոքը այդ բռնութիւնների դէմ։ Սօցիալ-դեմօկրատական ասաջինն էր, որ իբրև կուսակցութիւն իր օրգաններում անխնայ մերկացումներ սկսեց «ազգային» այդ «կառավարութեան» դէմ։ Հայհոյանքը, սպառնալիքը չը կանգնեցրին սկսված մերկացումները։ Բայց նորարարող սօցիալ-դեմօկրատական գեռ չունէր հող ժողովրդի լայն շրջանակներում, ուր տասնակ տարիներ առաջ արմատներ էր ցցել անդասակարգային-դեմօկրատական «Մշակը», որ միակ օրգանն էր մնացում, որ գեռ բարեացակամ վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի Դաշնակցութիւնը, մանաւանդ նրա կատարած «ինքնապաշտպանական» գործը։ *) Հնարաւորական պայքարի ժամանակ դաշնակցականների գործ դրած միջոցների անխարակտերութիւնը վայր գցեց օպտիմիստական կապանքները և «Մշակի» աչքերից։ Այնուհետև Ցոլնանեան դպրոցի տեսչական խնդիրը մի պատահական տիպիկ ապիճ էր լոկ, որ կոիւ սկսվի դեմօկրատիայի և դեսպոտիզմի կամ խուժանպատերազմի մէջ։ Այդ պայքարը քանդեց այն պատնէշը, որ արգելում էր ժողովրդական զայրոյթի ծուվացած ալիքներին արտայայտութիւն գտնել։ Ահա թէ ինչու Ցոլնանեան դպրոցի մասնաւոր խնդիրը տուաց հասարակական շարժման բնոյթ, դաշնակցական ըմբոստի դէմ հուժկու մի բողոք։ Նա մի տիպիկ եղանոյթ է, որի շուրջ ստեղծված դաշնակցական դաւերն ու ֆիլուները երևան եկան իրանց բնորոշ, ընկերվ ձևերով։ Դա մի դէպք էր, որը մեր հասարակական հաստատութիւնների հիանդոտ կողմերը արտայայտվեցին ցայտուն կերպով։

Նախորդ գլխում ես մատնանշ արեցի, թ մինչև այլոց, մեր դպրոցների կեանքում տիրող խայտառակ կարգերի երեք հիմնական պայմանների վրա։ Ցոլնանեան դպրոցի պայքարը ընկերվ մերկացրեց ի միջի այլոց և մեր դպրոցների իրաւական խառնաշփոթ, անկիրթարան, կամայական զրութիւնը։ Օգտվենք ուրեմն փորձից և օրեկոփ քննութեան ենթարկենք այն հիմնական կեղծիքները, որոնցից աշխատեցին օգտվել դաշնակցական բիւրօկրատները։ Բայց դրա մասին գալ անգամ։

Լ. Սարգսեան

ԴԱՐՁԵԼԻ ՏԵՂ ԳԻՒՂԻ ԴԷՊՔԻ ՄԱՍԻՆ

«Մշակի» ներկայ համարում տպում ենք Սաղմնադարանի հաղորդագրութիւնը Տեղ գիւղի դէպքի մասին։

Այդ հաղորդագրութիւնը հաստատում է գեղջկուհի Հուսու ծեծի փաստը, «Մշակ» լրագրի վերջը բուռնամբ արած բռնադատական քայլերը (առանց սակայն տուգանքի) և գիւղի ահաբեկված դրութիւնը։

Հաղորդագրութիւնը վկայում է, որ թշուառ Հուսու անպատուութիւնը մի սոսկալի բան է եղել և «Մշակի» մէջ գրվածը կազմում է մի տասներորդ մասը այն խայտառակութեան, որին ենթարկվել է Հուսին։

Սանձարձակութեան և բաշիբուզուկութեան հերոս Սողոմոնի արարքը մերկացվել է վերջապէս և Սողոմոնը հեռացվել է իր պաշտօնից։

Թղթակիցը հաղորդում է, որ Սողոմոնը եղել է գիւղից ընտրված մի անձն, և ոչ թէ նշանակված կազմակերպութեան կողմից։

Մենք գոհ ենք, անկասկած, որ տեղական դաշնակցական իրաւասուները այս անգամ պարզել են ճշմարտութիւնը և դատապարտել Սողոմոնին։

Սակայն մինչև այժմ մենք տեսնում էինք դրա փոխարէն չափազանց խիստ ձգտում՝ ժըխտել խայտառակ փաստը, իսկ «Երկիր» լրագիրը աշխատում էր մեզ վրա զրպարտողի տուաւը գցել այդ սարսափելի գործի առիթով։

Մեզ զարմացնում էր հովանաւորելու այն բուռն ցանկութիւնը, որ ցոյց էին տալիս «Երկրականները»։

Մենք համաձայն ենք մեր թղթակցի վերջաբանի խօսքերին, որ պէտք է Սողոմոնների շարքերը մաքրել և որ այդպիսիներին հեռացնելով միմիայն կարելի է կուսակցութեան վարկը բարձրացնել գիւղերում։

Անշուշտ, վաղուց այդպէս պէտք էր գործել։

Ա. Բ.

*) Մի բան, որի մէջ ես համակարծիք չեմ եղել «Մշակին», ինչպէս և առհասարակ Դաշնակցութեան նկատմամբ նրա դուալիզմը. ես համարում եմ այդ ընկերութիւնը անպայման չարիք։

Լ. Ս.

ԲԱՒԱԿԱՆ Է

«Կատուն հիւանդացած ժամանակ մկները միշտ հարսանիք են սարքում»։ Այս ժողովրդական ասացուածքն ենք միշտ մտաբերում ամեն անգամ, երբ «Երկիրն» ենք ձեռք առնում ու այնտեղ կարդում այն փքուն ու ճոռոմաբան զարձուածքները, որոնցով այդ թերթի դիկավարները կաշուից դուրս են գալիս միամիտներին ու խուժանին հաւատացնելու համար, թէ իրանք «բանւորների» ու «աշխատաւոր դասակարգի» շահերի պաշտպաններն են։ Այո, կատուն հիւանդացած ժամանակ մկները հարսանիք են սարքում։ Օգտվելով այն հանգամանքից, որ ամբողջ աշխարհի կողմից իբրև բանւորների, ամբողջ պրոլետարիատի պաշտպան ճանաչված սօցիալ-դեմօկրատ բանւորական կուսակցութեան հայկական թերթերը այժմ փակված են, դաշնակցական մկները մի կատարեալ ձիրաշաւ են սարքել։

Ճիշտ է, այդ մկները, դրանց դիմակը շարունակ պատռող «Կայծի» ու «Նոր Խօսքի» օրով էլ բաւական յանդգնութիւն ու անպատկառութիւն էին ցոյց տալիս, բայց այժմ դրանք բոլորովին չափն ու սահմանը անց են կացրել։ Միսանթրոպիան ու խարդախութիւնը կատարելագործութեան հասցրած այդ փոքրիկ էակները, մէմիտ հասարակութեան ու անգիտակից բանւորներին շփոթութեան մէջ գցելու համար, այժմ սկսել են զանազան բանւորներից ստորագրութիւններ որսալ ու բանւորների (իբր թէ) կողմից գրված նամակներով ապացուցանել, թէ իրանք սօցիալիստներ են ու բանւոր դասակարգի շահերը պաշտպանողներ։

Բայց մեթէ, պ. պ. ֆօկուսնիկներ, ձեզ պիտի աջողվի այդ «բանւորական» ստորագրութիւններով ձեր իսկական մանրաբուրժուական կեղտոտ դէմքերը ծածկել։ Դուք շատ էք զգուշանում այդ «բանւորական» ստորագրութիւններով, մտանալով միանգամայն, որ ամեն բանւոր կամ պրոլետար լինողը դեռ սօցիալիստ չէ ու ոչ էլ գիտակից իր դասակարգային շահերի, որպէսզի ամենայն պարզութեամբ կարողանայ հասկանալ ու զատել իր շահերի իսկական պաշտպաններին ու բարեկամներին ձեզ նման պղտոր ջրում անվերջ ձուկ որսացողներից։ Դուք մոռանում էք, պարոններ, որ ոչ միայն բոլոր բուրժուական - քաղաքական կուսակցութիւնների, այլև նոյնիսկ խուլիգանական շարքերն էլ գլխաւորաբար անդիտակից ու քաղաքական հասունութեան չը հասած բանւորներն են լցնում։ Մոռանում էք, որ բոլոր պօգրոմների մէջ մասնակցող ամենավարագ «հերոսները» քսա մեծի մասին հէնց բանւորներ են լինում, բանւորներ, որոնք իրանց տգիտութեան ու անզարգացողութեան պատճառով միշտ ցանկալի գործիք են դառնում ռուսական Խաժակների, Թոփչեանների ու նրանց նմանների ձեռքում, որոնց հաւաքական անունն է Կրուշեվան։

Արդ՝ ինչ արժէք կարող են ունենալ ձեր հաւաքած «բանւորական» ստորագրութիւնները, եթէ մի բուպէ թոյլ տանք նոյնիսկ, թէ այդ ստորագրութիւնները կամ կեղծ էին և կամ խաբեութեամբ հաւաքած։ Գիտակից բանւորները լաւ են ճանաչում իրանց պրոլետարական դասակարգային շահերի իսկական պաշտպաններին, իրանց միակ և ամբողջ աշխարհի բանւորներից ճանաչված բարեկամին, որ է և կը մնայ սօց. դեմօկրատական կուսակցութիւնը։ Գիտակցութեան ու քաղաքական հասունութեան հասած հայ բանւորները, հակասակ վրանները քսած հազար ու մի տեսակ կարմիր ու կանաչ ներկերին, ձեզ էլ են սկսել լաւ ճանաչել։ Այո, նրանք գիտեն և շատ լաւ գիտեն, որ դուք էլ էք «շահեր» պաշտպանում և, այդ շահերի լաւ պաշտպանութեան համար, պատրաստ էք նոյն իսկ ձեր եղբայր Կրուշեվանների օրինակին հետևել, բայց այդ շահերը ոչ բանւորների և ոչ էլ «աշխատաւոր մասսաների» շահերն են, այլ միմիայն ձեր սեփական, ձեր անկուշտ փորի շահերը և ձեր հայրերի մանրաբուրժուական շահերը։ Ուրեմն մի ծածկվէք բանւորների ու դժբաղդ աշխատաւոր ժողովրդի ետևը, մի արատաւորէք այդ անունը։

Բաւական է, долой руки!

Սօց.-Դեմօկրատ

ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին տարիներում, մի կողմից պետական էկզեկուցիաներից և զանազան ակտերից, միւս կողմից Թուրքական Թալանաւէր ազէաներից յետոյ, կենտրոնական քաղաքներում, մանաւանդ Թիֆլիսում բազմապատկվել է Թշուառներն, չքաւորների և անգործների թիւը։ Նախկին լէն օջախների, համեստ արհեստաւորների և խաղաղ գիւղացիների կարիքի մէջ ընկած անդամները, սարսափելի չքաւորութեան շնորհիւ, նիւթական որևիցէ ապահովութիւնից զուրկ լինելով, այժմ ստիպված են առանդական կեանք վարել և քաղցածութիւնից և անգործութիւնից ստիպված՝ սրա ու նրա դուռը բաղխել։

Ազէաների սկզբում, թարմ տպաւորութիւնների տակ զանազան տեղերից սկսեցին նուիրատուութիւններ հասցնել վնասածներին օգնելու։ Ազէաը մեծ էր, պահանջը շատ ու անմիջական, ուստի այդ նուէրները ինչպէս ստացվում էին, այնպէս էլ բաժանվում էին

արագ։ Փոթորկի նման եկաւ աւերը։ Հասարակական կազմակերպված աւելի խելահաս օգնութիւն այն մօտեռնին անհնար էր։

Վնասվածներից շատերը ազատից յետոյ նորից վերսկսեցին իրանց ինքնուշխատութեամբ կառավարել իրանց ընտանիքը, մեացած մասը հանդամանքների շնորհիւ, ընկաւ լումպէն-պրոլետարիատի շարքը, և գժուար թէ նա կարողանայ դուրս գալ իր նոր վիճակից։ Նրանցից շատերը հրաձիգ դարձան, և սովորեց այդ արհեստին, իսկ շատերն էլ կարիքից ստիպված ամեն օր սովի անհելի ճիրանները աչքի առաջ, ստիպված են գիմել կանոնաւոր անձնասրութիւններին, խմբագրութիւնների և բարեգործական ընկերութիւններին։ Բայց հասարակական նուիրատրութիւնների հոսանքը արդէն կարվել է, իսկ պահանջը մեում է։ Այդ պահանջը մշտական է և այլևս չէ կարելի նրան կոպէկներ տալով բաւարարութիւն տալ։ Բանի հասարակական, սոցիալական և տնտեսական պայմաններն այնպէս են, որ առ այժմ չքաւորութիւնը և մուրացկանութիւնը գոյութիւն ունեն ներկայ դէպքում, ապա այդ փաստի հետ հաշվելով պէտք է մտածել քիչ թէ շատ բարեկաւելու չքաւորների դրութիւնը ոչ թէ կոպէկներ տալով, այլ այնպիսի մի ազբիւր գտնելով, որ հնար եղածին չափ երկարատև և աւելի նպաստաւոր լինի։

Վաղուց հնացել է օգնութեան այն ձևը, որ մի քանի կոպէկներ տալով իր խիղճը մարդիկ հանգստացած էին համարում։ Զբաւորի շուաքը միշտ ունների ետևից է ման գալու։ Միակ խելացաս միջոցը, որ այժմ գործադրում է ամբողջ Արևմուտքը, դա չքաւորների դրութիւնն բարեւաւումն է աշխատանքի և զանազան այլ հիմնարկութիւնների միջոցով։

Կեանքը գնում է պահանջներ և այդ պահանջներին պէտք է բաւարարութիւն տրվեն։ Աղչանների յետոյ թափառական, անտէր-անտուն մեացին բազմաթիւ որբ և այրիներ ու անգործներ, որոնց թիւը քանի գնում այնքան աւելանում է։ Փողոցը կատարում է իր դերը նրանց վերաբերմամբ։ Ամեն օր տեսնում ենք մեր աչքի առաջ այդ նեղեալներին։ Եւ ահա պահանջը սահմանում է նոր, աւելի բեալ միջոցներ գտնէ այդ թշուառների մի մասին օգնելու համար։

Կաղաց ժամանակամիջոցում, եղած բարեգործական ընկերութիւնների թւի վրա աւելանում են նրանց նոր ուղղութիւնով և գործունէութեան ձևով ընկերութիւններ։ Մէկը Հայուհեաց Որբանոցն իսկ միւսը «Մուրա» կանանց աշխատանքի տան ընկերութիւնը։ Առաջինի նպատակն է «խնամել երկու տեսի հայ ազբատիկ որբերին առանց նրանց կոչման և դասակարգի խորութեան, տալով նրանց բարոյական դաստիարակութիւն և կրթութիւն» որբանոցի բացումով։ Երկրորդի նպատակն է «նպաստել չքաւոր հայ կանանց գործ կամ աշխատանք գտնելով, գործիքներ ձեռք բերելով նրանց համար և արհեստներ և կրթութիւն տալով նրանց մէջ։ Ինամել որբերին և այրիներին, տալ նրանց բժշկական օգնութիւն, հիւանդներին տեսարել հիւանդանոցներում։ Այս նպատակները իրագործելու համար բաց անել աշխատանքի տներ, որքանոցներ, ուսումնարաններ, արհեստանոցներ, տնարարական կուրսեր, կազմել դասախօսութիւններ և այլն»։ Ինչպէս տեսնում ենք, այս երկրորդ ընկերութիւնը աւելի լայն հիմքերի վրա է դրված և արդէն իր սուղ միջոցներով սկսել է իր գործունէութիւնը և շուտով լինելու են ընարութիւններ նպատակը իրագործելու համար։

Որբանոցի ընկերութիւնը արդէն ժողովի կայացրեց և ընտրեց վարչական մարմին։ Բարի և գեղեցիկ ցանկութիւններ։ Միայն մնում է եռանդ և ոյժ իրագործելու այդ ծրագրածները։ Միայն մի բան զարմացնում է մեզ, որ երկու ընկերութիւնն էլ իրանց ծրագրի մէջ մոցրել են առաջին կէսում, որ անդամներ կարող են լինել միայն կանայք։ Այս երկու ընկերութիւններն էլ, լինելով ֆէմանարօպ ընկերութիւններ, չունենալով իրանց ծրագրում առանձնանալու մի այնպիսի հիմնաւոր հիմունքներ, չը գիտենք ինչ պատճառով խոյս են տուել տղամարդկանց մասնակցութիւնից և առաջին իսկ քայլից Որբանոցի ընկերութիւնը գործնական կեանքում հակասից իր կանոնագրութեան օգուտն և ցանկութեան, ընտրելով իր Ժողովի նախագահ տղամարդ, հակառակ իր կանոնագրութեան § 513-ի։ Այս փոքր ցոյց է տալիս, որ չը պէտք է այդքան սահմանափակ լինել։ Սա մի ցանկալի հիմնարկութիւն է, որ ամենքի աջակցութեան կարօտ է, և կանայք չը պէտք է այդքան նեղ սահմանում դնէին այդքան լայն ծրագրված կանոնագրութիւնները։ Ինչպիսի, այդ տեսակ հիմնարկութիւնների առաջ գալը շատ ցանկալի և նպատակայարմար է։ Ցանկութիւնը և եռանդը հրաշքներ կը գործեն։ Եւ յուսով ենք, հայ կանայք զուրկ չեն լինի այդ եռանդից ունենալով այդպիսի ցանկութիւններ։

Յով. Կարապետեան

Ո՞Վ ԷՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՉԱՐԴԵՐԸ

Պետերբուրգի դատաստանական պալատի հոկտեմբերի 13-ի նիստում, բանւորական պատգամաւորների խորհրդի գործը քննելու ժամանակ, երդուեալ հաւատարմատար Գրուզենբերգը հետեւեալ յայտարարութիւնն է արել։

—Որովհետև դատավարութեան ժամանակ պարզվել է արդէն, որ բանւորները զինվում էին գլխաւորապէս Ջարդերի առաջն առնելու նպատակով և սև-հարիւրեակային կազմակերպութիւնների դէմ, ես յայտարարում եմ, որ պաշտպանութեան ձեռքում կան անհերքելի փաստաթղթեր, որոնցից երևում է, որ հոկտեմբերի 17-ից յետոյ ոստիկանական դեպարտամենտը ինքն էր ստեղծում բոլոր հակայեղափոխական գործողութիւնները, պատրաստում բոլոր թռուցիկները, կազմակերպում Ջարդերը և այդ բոլորը կատարվում էր ոստիկանական դեպարտամենտի դիրեկտորի և ներքին գործերի մինիստրի գլխաւորութեամբ ու մասնակցութեամբ։ Պաշտպանութեան ձեռքումն է գտնվում այն նամակի պատճէնը, որ ներկայ տարվայ յունիսի 14-ին ոստիկանական դեպարտամենտի նախկին դիրեկտոր Լոպուխինը ուղարկել է մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինին։ Այդ նամակում Լոպուխինը մանրամասն կերպով պատմում է դեպարտամենտի բոլոր աշխատանքների մասին։

Նախագահը (ընդհատելով).—Խնդրում եմ նամակի բովանդակութիւնը չը յայտնել։

Գրուզենբերգ.—Ես պէտք է մատնանշեմ նամակի գլխաւոր մասերը, որոնք ընորոշում են Բաշկիրովին, Կոժիսարովի և ընկ. գործունէութիւնը։

Նախագահ (յուզված)—Համառօտ, անպատճառ համառօտ կերպով...

Գրուզենբերգ.—Դուք ուզում էք, որ համառօտ ասեմ համեցէք։ Նամակը ասում է, որ հրէական Ջարդերը կազմակերպում էր կառավարչական իշխանութիւնը։ Նամակը ասում է, որ կառավարչական իշխանութիւնը իր գործակալների միջոցով պատրաստում էր ինտելիգենցիայի Ջարդերը և բանւորական պատգամաւորների խորհրդի պատերը արատաւորելու նպատակով թռուցիկներ էր տարածում։ Նամակը ասում է, որ կառավարչական իշխանութիւնը սուտ էր խօսում...

Նախագահը յայտնում է, որ պալատը կը տայ իր եզրակացութիւնը Լոպուխինի նամակը կարդալու հնարաւորութեան մասին, և պաշտպանի ձեռքից առնում է նամակի պատճէնը։

Գրուզենբերգի յայտարարութիւնը ճնշող տպաւորութիւն է թողնում։ Դահլիճում ապամուկ է սկսվում։ Զը նայելով որ փորձում են հանգիստ կերպով շարունակելու նիստը, այնուամենայնիւ նախագահը հարկադրված է լինում կէս ժամով ընդմիջում յայտարարելու։

Ընդմիջումից յետոյ դատախազը յայտարարում է, որ Լոպուխինի նամակը գործի համար հետաքրքրութիւն չէ ներկայացնում, և հրաժարվում է հանձնարարեալ տալ նամակը կարդալու մասին։ Այդ ահիթով սուր վիճաբանութիւն է սկիզբ ունենում դատախազի և պաշտպանների միջև։ Պաշտպան Գրուզենբերգը կրկին խօսք է խնդրում և անում է նոր յայտարարութիւն։

—Լոպուխինի նամակը, որի մասին ես ասացի առաջին յայտարարութեանս մէջ, ստացված է նրանից անմիջական կերպով և իր վրա կրում է նրա ստորագրութիւնը։ Պալատը միրժում է թոյլ տալ նամակը կարդալու։ Այդ պատճառով ես նոր խնդրիք եմ առաջադրում. կանչել Լոպուխինին իբրև վկայ։ Օրէնքով ես պարտաւոր եմ հիմնաւորել իմ խնդրիքը։ Պալատը պարտաւոր է լսելու իմ ցուցմունքները։ Լսվան են, արդեօք, Լոպուխինի ցուցմունքները և գործի համար նոր, թէ ոչ։ Եկան են նրանք։ Լոպուխինը պէտք է երդմամբ վկայէ դատարանում, որ ոստիկանական դեպարտամենտում տպարանական առանձին մեքենայի վրա Կոմիսարովի հսկողութեամբ տպագրվում էին թռուցիկներ, որով կոչ էին անում քաղաքի ազգաբնակութիւնը Ջարդելու հրէաներին, հայերին և ինտելիգենցիային։ Միենոյն մեքենայի վրա արտագրվում էին կոչեր կեղտոտ զրպարտութիւններով լի բանւորական պատգամաւորների խորհրդի հասցէին ուղղված։ Լոպուխինը պէտք է վկայէ, որ այդ բոլոր թռուցիկները նախապէս կարդում էր ոստիկանական դեպարտամենտի դիրեկտորը, այժմ սենատոր, Վուիչը և ինքը տուղում էր։ Լոպուխինը պէտք է երդմամբ հաստատէ, որ Բաշկիրովին այդ բոլոր թռուցիկները տարածում էր Պետերբուրգում բժիշկ Դուբրովինի և «ռուս ժողովրդի միութեան» միջոցով, Մոսկվայում՝ Գրինգմուտի միջոցով, Վիլնայում՝ գեներալ-նահանգապետի մօտ ծառայող չինովնիկ Սկոտի միջոցով։ Միևնոյն ժամանակ, Լոպուխինը իր նամակում հաստատում է, որ, չը նայելով Բարձրագոյն կարգադրութեամբ Բաշկիրովին հեռացված էր իր պաշտօնավարութիւնից, բայց և այնպէս ամմիջական իշխանութիւնը շարունակում էր «ռուսաց կայսրութեան գաղտնի ոստիկանութեան բաժանմունքների» կառավարութիւնը նրան յանձնել։ Լոպուխինը երդմամբ պարտաւոր է վկայել, որ պատրաստում էր հակայական Ջարդի ենթարկել ամբողջ ինտելիգենտ Ռուսաստանը։ Մենք դեռ կը տեսնենք թէ դուք ինչ պիտի ասէք, պ. ազնուականութեան ներկայացուցիչ, ինչ պիտի ասէք դուք, պ. քաղաքագլուխ և գիւղացիութեան ներկայացուցիչներ, երբ լսէք, որ Պետերբուրգը փրկված էր Ջարդից բացառապէս բանւորական պատգամաւորների խորհրդի շնորհիւ, որին դուք այժմ դատում էք։ Մինթէ այդ հանդամանքները էական չեն։ Մինթէ նրանք նորութիւն չեն։ Մինթէ նորութիւն չէ այն, որ ազգաբնակութեան հանգստութիւնը պահպանելու համար կոչված իշխանութիւնը նրա մէջ թշնամութիւն է սերմանում և ոճրագործեան դրդում։ Եթէ այդ ձեզ համար նորութիւն էլ չէ, գոնէ դա նորութիւն է ամբողջ Ռուսաստանի համար։

Մ. ԵՍ. ՀԵՐՑԵՆՇՏԵՅՆԻ ԱՅՐԻ ՆԱՄԱԿԸ

Ներկայ տարվայ օգոստոս ամսին Ն իմ Ն ովգորոդում կայացած մանուֆակտուրների III-դ համառուսական համագումարը որոշեց մասնութեամբ սպանված Պետական Դումայի նախկին անդամ Միխայիլ Եակովլևիչ Հերցենշտեյնի այրին յայտնել իր խորին ցաւակցութեան զգացմունքները։

Դրան պատասխան համառուսական մանուֆակտուրական համագումարի նախագահ Ա.-Մ.-ը. Թօվչիրաշվը ստացել է, ինչպես հաղորդում է «Հասայ» լրագիրը, հանգուցեալի այրի Ա. Հերցենշտեյնի հետեւեալ նամակը.

Ողորմած տէր,

պ. Թօվչիրաշով.

Թոյլ տուէք լինի ձեր միջոցով արտայայտել իմ խորին երախտագիտութիւնը մանուֆակտուրների 3-րդ համառուսական համագումարին, որը յարգել լինի իր անկեղծ ցաւակցութեամբ իմ ամուսնու եղեռնագործ սպանութեան առիթով։ Ցաւում եմ, անկեղծօրէն լինի համակրողների հետ միասին, որ իմ ամուսնուն վիճակված չէր—ապնուարար մտածողների հետ հանդերձ—աւարտել ազգային և ֆինանսական հարցերի վերակազման գործը՝ ռուս երկրի բոլոր քաղաքացիների, առանց ազգի խարութեան, երջանկութեան և բարօրութեան համար։

Թոյլ տուէք լինի էլ իմ կողմից արտայայտել ձեզ զարմացման և ցնծութեան ու հրճուանքի այն զգացմունքները, որոնց ես քաղեցի, հետեւելով մուսուլմանական երրորդ թերթում։

*) Մանրամասնութիւնները տպագրվում են «Բիլաս» թերթում։

Իշ. Պեսոր Դ. Դօլգօրուկովը սահմանադրական-ռամկավար կուսակցութեան անունից յայտնեց, որ մեում է ժողովում, եթէ ոչ օպիլիստ-յեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների (երկու ֆրակցիաների) ներկայացուցիչները նոյնպէս վճռողական ձայն կունենան։

Զայրի իրաւունք ի հարկէ տուեցին, և ժողովը, վերջապէս լսեցվեց, երբ արդէն մութը ընկել էր։

Կրկնում ճառեր արտասանեցին՝ Մանդելշտամ, Ֆայլբերգ և Տան, իսկ գործնական՝ Շչեպկին, իշ. Շախովսկի, Գուլովին, Կարլուկով։

Առաջինը մատնանշեց այն վտանգը, որ սպառնում է շարժմանը և ազատութեան սրբազան գործին երկու կողմից էր։

Ֆայլբերգը նախազգուշացնում էր, որ ներկայ կրիտիկական մոմենտում չը պէտք է բաժանվել երկու բանակի. լիբերալ-բուրժուազական և պրոլետարական գործադուլային կոմիտեներ։ Ռուսաց ազատագրական շարժման առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նա անդամակարգային է։ Անհրաժեշտ է լիակատար միութիւն, որովհետև առայժմ բոլորի ճանապարհը տանում է ընդդէմ դարաւոր թշնամու—ոստիկանական—կամայական կարգի դէմ։ Վտանգի մէջ է Ռուսաստանը, նրա կուլտուրան և ազատան։ Եւ մի այդպէս պատմական մոմենտում կարող է լինել միայն ոյժերի բաժանումը երկու մասի. ազատագրական շարժման կուսակցիների և կամ հակառակորդների։

Մենք այստեղ գտնվոդներս, որ հրաւիրված ենք Մոսկվայի ներկայացուցչութեան՝ դումայի կողմից, պէտք է լինենք միասին, մի գործի պաշտպան, պաշտպան մեր ընդհանուր մայր Ռուսաստանի համար...

Նա առաջարկեց անյապաղ կազմել «հասարակական փրկութեան կոմիտեա» բոլոր պրոգրեսիվ կուսակցութիւնների և հասարակական բոլոր կազմակերպված ոյժերի ներկայացուցիչներից բաղկացած։

Երկարատև լուսն ծափահարութիւնները հաստատեցին, որ ճառախօսը շատ ճիշտ էր ըմբռնել ընդհանուր տրամադրութիւնը և շնչատի խիստ էր զգայուն լարին։

Ասացին նոյնպէս, որ անհրաժեշտ է, կոմիտեից բացի, քաղաքային միլիցիա էլ կազմել անարխիայի և մութ ոյժերի դէմ պաշտպանվելու համար։

Պր. Կարլուկովը, որ նոր էր այցելել հասարանը, ժողովի տրամադրութիւնը աւելի ևս բարձրացրեց պարզ ու հանդիսա կերպով պատմելով այն բոլորի մասին, ինչ որ կատարվում էր հանալարանում, անխուսափելի կոտորածի սպառնալի արտաբերների մասին։

Քաղաքային և գիմտվային ձայնատուները ընդմիջումների ժամանակ համաձայնեցան եկան, որ անհրաժեշտ է խիստ և եթէ դրամական միջոցներ յատկացնել միլիցիան ըստ պատշաճի տնելու համար։ Բաղաքը տրամադիր էր այդ նպատակի համար մինչև 700 հազար ռուբլի տալու, գիմտվոն, մինչև 100 հազար։ Ամբողջ պատասխանատուութիւնը վարչութիւնը և ձայնատուները վերցնում էին իրանց վրա...

Գաստանան և խայտաբղէտ ժողովը թընում էր, որ հզօր կարողութիւնն էր գտել Ցարատրութիւնների ուժգին հարուածների տակ սպասվում էր, որ խիստ պէտք է կռվել միաձայն վճիռը...

Բաղաքագլուխ իշխան Գալիցինը, որ այդ օրերը հիւանդացել էր, իր «խոհեմ չափաւորութեամբ» չէր առանում տրամադրութիւնները։

Գեներալ-նահանգապետ Դուբասով, որին արդէն այցելել էին շատերը, Դումայի նախաձեռնութեանը վստահութեամբ էր վերաբերվում։

Իշխանութիւնը կուչ էր եկել, անզօրացել և կորցրել իր գլուխը անտեսանելի մրրիկ-գործադուլի անաւոր մղումի առաջ։

Բայց, երբ նախագահը (Ս. Ա. Մուրոմցեվը) պարզ ու շիտակի ձայնով ուզում էր քուէարկութեան ենթարկել զանազան գործնական հարցեր, գիմտվային և քաղաքային արկղները արդէն պատրաստ էին բացվելու միլիցիան անմիջապէս կազմակերպելու համար և պարզվեց նոյնիսկ, որ հնարաւոր է զէնքի անհրաժեշտ քանակութիւնը ձեռք բերել հէնց Մոսկվայում,—խօսել սկսեցին սոցիալիստ-յեղափոխականները և սոցիալ-դեմոկրատները։

Նրանք հարցեր դարձեցրին ուղղութիւն տուող յեղափոխական կենտրոնական մարմին կազմակերպելու և նրան ընտրելու եղանակի մասին։ Միևնոյն ժամանակ սկսեցին խօսել, որ անկարելի է հաշտեցնել դասակարգային հակադիր շահերը իրար հետ և որ անհրաժեշտ է վճռական և գեկավարող դերը յատկացնել պրոլետարիատին։

Մի քանի ճառախօսներ նոյնիսկ աւելի հեռուն գնացին։ Նրանք օգուտ քաղեցին առիթից իրանց անվստահութիւնն ու արհամարհանքը արտայայտելու բուրժուազիային, յայտնելով, որ իրանց աւելութիւնը դէպի նրան նոյնիսկ աւելի է զօրեղ, քան դէպի միանգամ բիժիմի ներկայացուցիչները...

—Միայն բանւորների կոչացած ձեռքերով, խեղդամահ արված կամ անվնաս դարձրած բուրժուազիայի գիսկների վրայից անցնելով, Ռուսաստանում նոր կարգը կը հաստատվի, միայն պրոլետարիատը կը տայ կարգ ու ապառութիւն,—բացականչում էր յափշտակված երիտասարդ ճառախօսը։

—Մենք մեր սկսած գործը չը պէտք է բաց թողնենք մեր ձեռքից,—որոտում էր մի ուրիշ ձայն։

—Ժողովրդի և պատմութեան առջև պատասխանատուութիւնը ընկնում է մեզ վրա, որ այս բոլոր դաւաճանութեան խնդիրն ենք վճռում,—յիշեցնում էր ոգեորութեամբ բորբոքված սոցիալիստ-յեղափոխական մի աղջիկ։

Դումայի անպէտ դահլիճը, որ հազիւ էր լուսաւորվել նախապատեան սեղանի վրա դրված հինգ մոմերով, սկսեց, կարծես, աւելի մայրվել։

Անկուսակցական ձայնատուները, մանաւանդ ծերուկները, սկսեցին վախեցած դէս ու դէն նայել և մէկ մէկու հետից քաշվել դէպի դռները։

Եւ որքան որ խորհրդակցութիւնը, ակամայից, միտինգի կերպարանք էր ստանում և մինչև անգամ բանւորական ներկայացուցիչների մէջ էլ պատակում էր ծագում այդպիսի քայլերի վարժամ լինելու մասին, հետզհետէ աւելի էր պարզվում, որ այդ բազմահազար տարրերի ձուլուածքը, որ մի երկու ժամ առաջ արդէն ապառնվված էր թում, ձևաքից դուրս է գալիս։

Ներդրանցութեան մէջ պատակում և հիասթափութիւն տիրեց։ Նա, որ պատմական ժողովից պէտք է կազմակերպէր «փրկութեան կոմիտեա», նորից դարձաւ խառը, ոչ մի նշանակութիւն չունեցող նիստ։

Դիշերվայ ժամի 3-ին այդ վախմանը ունեցաւ Մոսկվայի անաջող կնվենտը։

Յեղափոխական պրոլետարիատը այնուհետև գնաց ադէտաբեր «իր ճանապարհով»—դէպի զինված ապատամբութիւնը։

Իսկ դուման, յանձին Ն. Ն. Դուշկովի, երկու ամսից յետոյ ողջունեց իրան նուաճող ադմիրալ Դուրասովին։

(«ՐՔԿԲ»)

«ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

(Կարուցկի)

II

Անմիջական օրէնսդրութիւնը քաղաքակրթութեան շրջանում.

Զարգացումը կանգ չէ առնում բարբարոսութեան ասպիճանին հասնելուց յետոյ։ Շատ ժողովուրդներ անցել են նրան և քաղաքակրթութեան են հասել։ Հողագործութեան զարգացումը ամենակարևոր խթանն է եղել դրա համար։ Հողագործութիւնը հետզհետէ աւելի ու աւելի առաջնակարգ տեղն է բռնում, իսկ որսորդութիւնն ու խաշնարածութիւնը (ի բաց առեալ այնպիսի տեղերը, որտեղ չափազանց անյարմար է հողագործութեամբ պարապելը) աւելի ու աւելի կորցնում էին իրանց նշանակութիւնը, և, վերջապէս, որսորդութիւնը ուտելիք հայթայթելու միջոցից դառնում է սպորտ, զուարճանքի մի միջոց։ Այդ յեղաշրջումը չափազանց արագութեամբ կատարվից գերմանների կեանքում նամանաւանդ հռոմայական կուլտուրայի ազդեցութեամբ, ազդերի տեղափոխութեան ժամանակներում։ Մենք, ի հարկ է, այստեղ չենք զբաղվի այն առանձնայատուկ հանգամանքներով, որ առաջ էին եկել հռոմայական կուլտուրայի ազդեցութեամբ; այլ կը քննենք միայն գերմանական ժողովուրդների զարգացման սիստիքական կողմերը։

Որչափ աւելի հողագործութիւնը, իսկ նրա հետ զուգընթացաբար և խաշնարածութիւնը, փոքրիկ համայնքների կամ նահապետական ընտանիքների համար հասոյթների միակ աղբիւրն էին դառնում, այնչափ աւելի էլ կանայք անկարող էին դառնում իրանց սեփական ոյժերով այդ բոլոր աշխատութիւնները կատարել։ Տաճիտի ժամանակներում գիւղատնտեսական աշխատութիւնների մէջ արդէն սարուկներն էին նրանց օգնում, ինչպէս և ընտանիքի ազատ, բայց զէնք կրելու անընդունակ արական անդամները։ Երեխաները, պառաւները, ծերերը։ Բայց շուտով զինուորներն էլ են ստիպվում այդ աշխատութիւններով զբաղվել։ Ազդերի տեղափոխեան ժամանակ որսորդն ու զինուորը արդէն հողագործ է դառնում։ հիմա նա էլ է տանը կապված, ինչպէս և կիները, և որովհետև այն ժամանակվայ հողագործութեան զարգացման ատիճանը այլևս թոյլ չէ տալիս ընակարանը տեղից տեղ փոխել, ուստի և այդ ժամանակվանից տարդին հողի հետ են կապվում և դառնում են նստակեացներ։

Արդիւնաբերութեան մէջոցի մէջ կատարված այդ յեղաշրջումը արմատական փոփոխութիւն է առաջացնում և ամբողջ օսոյիալական ու քաղաքական կազմի մէջ։

Կուլտուրական զարգացման աւելի նախկին ատիճաններում պատերազմը աչքի ընկնող դեր էր խաղում արդիւնաբերութեան մէջ. սովորաբար դա մի կռիւ էր արդիւնաբերութեան ամենակարևոր միջոցներ, տերրիտորիա (երկիր) ձեռք բերելու համար, որ անհրաժեշտ էին որսորդութեան կամ խաշնարածութեան համար, և որ անհրաժեշտ էր պատերազմով կամ խիլ և կամ պաշտպանել։ Այնպիսի տեղերում, ուր մի վայրենի ցեղ գրաւել էր լինում քաղաքակրթվածի, վիճեցի տերրիտորիայի համար, բացի պատերազմից, կատարվում էր և յափշտակիչ յարձակումն, մի ձեռնարկութիւն, որը յաճախ բարբարոսներին շատ հարուստ աւար էր բերում։ Այնպիսի բարբարոս ցեղեր կային, որոնց պիտոյքներ ձեռք բերելու ամենագլխաւոր միջոցը քաղաքակրթված հարեւաններին կողոպտելու մէջ էր կայանում։

Այդպիսով, զինուոր լինելը այդպիսի հանգամանքների մէջ շատ օգտակար իրաւունք էր համարվում և շատ էժան էր նստում։ Զինուորի համար անհրաժեշտ զէնքը նոյնն էր, ինչ որ անհրաժեշտ էր և որսորդութեան համար, պիտոյքներ ձեռք բերելու այդ ամենակարեոր աղբիւրի համար։ Եւ, ինչպէս որ մենք արդէն կարողացանք նկատել, պատերազմելու համար ժամանակի պակասութիւն չէր զգացվում։

Մենքը բոլորովին այլ կերպարանք է ստանում, երբ թափառաշրջիկ կամ հիասթափող որսորդների կամ խաշնարածների ցեղերը նստակեաց հողագործներ են դառնում։ Հողագործը այլ ևս մեծ օգուտներ չէ կարող սպասել պատերազմից։ Պատերազմով ձեռք բերված երկիրը դրաւելու համար նա ստիպված պիտի լինէր ձեռքից թողնել այն, ինչ որ ձեռք էր բերում նա ամապէն աշխատանքով։ Կողոպտուն էլ նրան շատ հարուստ աւար չէ խոստանում. նրա զրացիներն էլ կուլտուրական զարգացման նոյն ատիճանի վրա են կանգնած, ինչ և ինքն է, կամ գուցէ և աւելի ստոր ատիճանի վրա։ Բայց եթէ պատերազմից ստացվելիք օգուտները նուազում են, դրա փոխարէն ընդհանուրը չափազանց մեծանում են պատերազմից առաջացած վնասները։

Հողագործութեան համար հնարված արդիւնաբերութեան նոր գործիքները չեն կարող այլևս պատերազմի համար զէնքի դեր կատարել։ Հողագործութեան տեխնիկայի հետ միաժամանակ զարգանում է և պատերազմական տեխնիկան. պատերազմի համար աւելի ևս թանկագին զէնք է պահանջվում, որ բոլորովին անպէտք է աշխատանքի գործածութեան համար։

Ինչպէս պիտի վարվի հողագործը այդպիսի դրութեան մէջ եղած ժամանակ։ Որպէսզի իր ամբողջ ունեցածից չը զրկվի, նա ստիպված է զոհել այդ ունեցածի մի մասը։ Կուլտուրական զարգացման այդ ատիճանում աշխատանքը արդէն այն ատիճան արդիւնաւորութեան է հասնում, որ սովորաբար աւելի շատ արդիւնք է տալիս, քան անհրաժեշտ է արդիւնաբերողին ու նրա ընտանիքին։ Արտադրութեան այդ աւելորդը հողագործին միջոց է տալիս իր համար պաշտպաններ վարձելու։ Մի յատուկ դասակարգի մարդկանց միջոցներ ստալով, նրանց հոգերը մշակելով, նրանց համար տներ շինելով ու քանդվածները նորոգելով, հողագործները այդ մարդկանց միջոց են տալիս նուիրվելու պատերազմական արհեստին առանց իրանց անտեսութեան համար մի որևէ վնաս կրելու, ճիշտ այնպէս, ինչպէս որ բարբարոսութեան շրջանում կանանց աշխատանքը միջոց էր տալիս տղամարդկանց հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարելու որսորդական կամ պատերազմական նպատակներով։

Մարդկանց այդ դասակարգը այդ ժամանակից ի վեր հողագործներին ազատում է զինուորական ծառայութիւնից և երկրի ու նրա ընակիչների պաշտպան է հանդիսանում։

Այսպէս է զինուորական կաստայի անտեսական հիմքը։ Այդ կաստաները, նայած թէ ինչպիսի զանազան պատմական պայմանների տակ են առաջ եկել, միմեանցից չափազանց տարբեր ձևեր են ստանում, այդ զինուորական արիստոկրատիան կազմվում է կամ ցեղապետներից ու տոհմապետներից և համայնքի այլ պաշտօնեաներից, սրանց շքախմբերով ու ծառաներով հանդերձ, կամ թէ չէ՝ մի բոլորովին այլ բարբարոս ցեղ, զօռով ներս խուժելով երկիրը, այդ պաշտօնը իր վրա է վերցնում, դրա հետ իւրացնելով և ազնուականութեանը յատուկ բոլոր արտօնութիւնները, կամ վարձու հրամանատար են կատարում այդ գերը և այլն։ Բայց որչափ էլ տարբեր լինեն զինուորական կաստաների ձևերը, այնուամենայնիւ մենք նրանց տեսնում ենք ամեն տեղ, ուր հողագործութիւնը արդէն արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղն է դառնալ,—ի հարկէ, ի բաց առեալ միանգամայն անտարի ու անմատչելի տեղերը—զարգացման այդ ատիճանում զինուորական կաստան ամենամեան անհրաժեշտութիւն է ներկայացնում։ Դրան բոլորովին չէ հակասում այն հանգամանքը, որ զինուորական կաստաները մեծ մասամբ բռնութեամբ են կազմվում։

Չէ՞ որ այդը նոր հասարակական կազմակերպութեան մայրը չէ, այլ դայակն է։

Բայց հասարակական վարչութեան, օրէնսդրութեան և դատարանի հետ էլ նոյն բանը պատահեց, ինչ որ զինուորական ծառայութեան հետ էր պատահել։ Հասարակական յարաբերութիւնները գնալով աւելի ու աւելի բարդանում էին, դարգանում էր աշխատանքի բաժանումը, դասակարգային ու պրոֆեսիոնալ տարբերութիւններ էին առաջանում, մասնաւոր սեփականութիւնը մեծացաւ թէ քանակով և թէ իրաւական իմաստով, հասարակութեան մէջ առաջացաւ միմեանց հակառակ շահեր, հասարակական վարչութեան, օրէնսդրութեան և դատարանի գործերը գնալով աւելի շատանում, բազմակերպ էին դառնում և գժուարանում էին։

Երբեմն-երբեմն այդ գործերը լուծելու համար դումարված ժողովրդային ժողովները, որոնք իրանց վճիռների մէջ ըստ մեծի մասին հիմնվում էին հին սովորութիւնների վրա, այլևս բաւարար չէին համարվում։ Այդ ժողովներում քննվելիք խնդիրների բազմանալու հետ միաժամանակ ժողովրդի մէջ պակասում էր և այդ ժողովներին կարգով մասնակցելու ցանկութիւնը, իսկի մէջոց էլ չէր լինում ժողովների գնալու։

Հողագործը գնալով աւելի ու աւելի ձգվում էր իր քաղաքական ու դատաւորական ամենամեծար պարտականութիւնները ուրիշներին յանձնել, ի հարկէ, նոյնպէս ոչ առանց դրանց համապատասխան վարձատրութեան, ինչպէս նա արդէն յանձնել էր զինուորական ծառայութիւնը։

Ամենից յարմարն էր՝ այդ պարտականութիւնները յանձնել հէնց այն մարդկանց. որոնք յանձն էին առել զինուորական ծառայութիւնը կատարել։ Իրապէս էլ, մենք նկատում ենք, որ ամեն տեղ, ուր այդ զարգացումը կատարվում էր առանց այնպիսի հանգամանքի, որ բարձր կուլտուրան ազդող հանգիսանար աւելի ստոր կուլտուրայի վրա, ինչպէս օրինակ՝ Եգիպտոսում, սկզբներում Թագաւորում էր միմիայն մէկ դասակարգ կամ կաստա։

Ընդհանրապէս այդ դասակարգը յետագայում այնուամենայնիւ երկու դասակարգի է բաժանվում. զինուորների դասակարգ և այսպէս կոչված քուրմերի դասակարգ, որը վարչական ամենակարևոր գործերը տնօրինողն էր, այն է՝ օրէնսդրութիւնը և դատաւորութիւնը։ Առանձնայատուկ պատմական պայմաններում, ինչպէս օրինակ, գերմանացիների մէջ, որոնք հռոմայական կայսրութիւնը ժառանգեցին, այդ դասակարգային բաժանումը մի անգամից է տեղի ունենում։

Այսպիսով, քաղաքակրթութեան սկզբնաւորութեան հետ հին ժողովրդային ազատու-

թինները հետզհետէ անհետանում են։ Դրանք անհետացան ոչ թէ տէրտէրների խարդախութիւն կամ թաղաւորների տիրապետելու ցանկութեան պատճառով, այլ պարզապէս ազգութիւնների միջոցների զարգացման շնորհիւ։ Այսպէս, օրինակ, կարելի է նկատել, որ արեւմտեան գերմանացիների մէջ ժողովրդային ազատութիւնների անկման ժամանակ, ազգերի տեղափոխութիւնից յետոյ, առաջին դարերի ընթացքում, թաղաւորները և պաշտօնեաները բոլորովին չէին ձգտում ժողովրդի ազատութիւնները սահմանափակել կամ խլել։ Ընդհակառակը նրանք միշտ աշխատում էին, որ ժողովուրդը մեծ չափով մասնակցէ իր վարչական գործերի մէջ։ Նրանք տուգանք էին վերցնում այն անձնաւորութիւններից, որոնք չէին յաճախում տիւդիները (ժողովները)։

Իսկապէս մինչև որ յառաջ կազմակերպութիւններ չէին առաջացել, որոնք իրանց վրա վերցնէին ժողովրդային ժողովների պարտականութիւնները, այդ ժողովների անկանոն գործունէութիւնը անպէտք էր դարձել ամբողջ հասարակական կեանքին։ Պատկերը, ի հարկէ, փոխվից, երբ այդ կազմակերպութիւնները արդէն կազմվեցին և իշխանութեան ու հարստութեան աղբիւր դարձան։ Այդ ժամանակվանից է վեր հին ազատութիւնները վերականգնելու ամէն մի փորձ արդէն հանդիպում է ոճրագործութիւն ընդդէմ այդ կազմակերպութիւնների իշխանութեան և հարստութեան հիմունքների։ Միւս կողմից, մի ուրիշ դէպք ևս մեծացած ժողովրդային ազատութիւնների սահմանափակումը այդ ժամանակվանից է վեր միշտ այդ կազմակերպութիւնների իշխանութեան և շահագործութեան սահմանները ընդարձակելու համար։ Սակայն հոգևորականութեան և զինուորական արիստոկրատիայի թագաւորութեան արմատը նրանց անտեսական անհրաժեշտութեան մէջ էր թաղված։

Այնուամենայնիւ, ժողովրդի ազատութիւնը բոլորովին չէ ոչնչացում ամբողջապէս հոգևորականութեան և ազնուականութեան թագաւորութեան ժամանակաշրջանում։ Դա սկսում է միայն բիւրօկրատական կառավարութեան ժամանակներում։ Ժողովրդային ազատութեան շրջանը միայն սահմանափակվում է։ Դիւրացիք այլես ժամանակ և միջոց չունեն մասնակցելու ցեղի և ազգի գործերը կարգաւորելու մէջ։ Բայց համայնական գործերի վարիչը նրանց ձեռքն է մնում։ Այդքանն էլ բաւական է նրանց համար։ Ամէն մի գիւղական համայնք այժմ մի առանձին անտեսական մասնիկ է կազմում, որը առնասարակ, որչափ քիչ անչափութիւն ունի արտաքին աշխարհի հետ, այնչափ էլ իրան աւելի լաւ է զգում։ Հետաքրքրութիւնը դէպի ցեղի գործերը, ցեղային զգացմունքը աւելի ու աւելի թուլանում է, համայնքը գիւղացու աշխարհն է դառնում, նրա քաղաքականութիւնը աւելի ու աւելի սահմանափակվում է իր ծուխով։

Որչափ այս էվոլիւցիան կատարվում ու զարգանում է, այնչափ աւելի նոր ու նոր հասարակութիւններ, պետութիւններ են առաջ գալիս նախկին ցեղերից ու ցեղային խմբերից, որոնք հետզհետէ կորցնում են իրանց օրգանական ամբողջութիւնը։ Թագաւորը կրթութիւնից առաջ եղած ժամանակներում ցեղը կազմվում էր նրա անդամների մէջև եղած անխզելի կապի հիման վրա, իսկ պետութիւնը, որի մասին այստեղ խօսում ենք, ինչպիսին օրինակի համար ներկայացնում է միջնադարեան ֆէոդալական պետութիւնը կամ արեւելեան պետութիւններից շատերը, հիմնվում է համարեա թէ բացառապէս տիրապետող դասակարգերի միջև եղած կապի հիման վրա, այն է՝ արիստոկրատիայի և հոգևորականութեան։ Առանձին համայնքը ոչ մի օրգանական կապ չունի պետութեան հետ։

Ցեղը կարելի էր ոչնչացնել կամ իր ընակավայրից դուրս քշել, բայց չէր կարելի նրանց հետ ուղած ձևով մասերը անջատել և նրանց ուրիշ ցեղերի միացնել։ Ցեղը իրանից մի անխզելի ամբողջութիւն էր ներկայացնում։

Իսկ միջնադարեան կամ արեւելեան պետութիւնները իրանից ներկայացնում են միայն համայնքների ու շրջանների մի-մի պարզ միութիւններ (ագրեգատներ), որոնցից կարելի է ամէն մի համայնք կամ շրջան բաժանել և մի այլ միութեան մէջ մտցնել, առանց հասցնելու նրանցից յարաբերութիւնների մէջ մի որևէ էական փոփոխութիւն անելու։ Մի բաղդատաբար նուազող կամ մի որևէ թագաւորող տուն, հեռատեսութեամբ ամուսնութիւն կատարելով, զարգացման այդ աստիճանում, շատ հեշտութեամբ կարող են մի շատ պետութիւն ստեղծել։ Բայց այդպիսի մեծ պետութիւնը նոյնպէս շատ հեշտութեամբ կարող է բաժան-բաժան լինել, թշնամու հետ ընդհանր վիրով։

Գիւղական համայնքի անդամները շատ էլ չեն հետաքրքրվում տիրապետող դասակարգերի մէջ եղած փոփոխութիւններով։ Այդ փոփոխութիւնները նրանց մի առանձին չեն շահագրգռում. նրանց համար բոլորովին միևնոյն է թէ ում պիտի հարկ վճարեն ու ճորտային ծառայութիւն անեն՝ Յովհաննէսին, թէ Ստեփանին։ Բայց եթէ նոյն իսկ ցանկանան էլ հակառակել մի որևէ փոփոխութեան, այդ նրանց ոչ մի առանձին օգուտ չի բերի, որովհետև գիւղական համայնքը, իր մեկուսացած զրութեան շնորհիւ, համարեա թէ բոլորովին անզօր է ամբողջ պետութեան տիրապետող դասակարգերի կազմակերպված և շատ աւելի զիրաւոր ոյժի առաջ։

Այդ համայնքները, իրանց անկազմակերպութեամբ և անտարբերութեամբ դէպի պետական քաղաքականութիւնը շատ անիշխանների (անարխիստների) համար իդէալ են համարվում։ Բայց հէնց այդ յատկութիւնները, ինչպէս արդէն Էնգելսն էր նկատել աբեւելեան բանապետութեան վերաբերեալ, խանգից ներկայացնում են տիրապետող դասակարգերի անսահման բանապետութեան ամենամեծ հիմունքները, բանապետութեան, որը յատուկ է կուլտուրական զարգացման այդ աստիճանին, միևնոյն է, թէ դա ինչ ձևով է արտայայտվում՝ զինուորական արիստոկրատիայի բանապետութիւն, թէ քրմական կաստայի, թէ այդ երկու կաստաներից մէկի կամ հէնց երկուսի էլ գլխաւորի կողմից։

«ՀԻՐՕՄԱՆՏԻԿ» ԿՕՆՍՏԱՆՏԻՆԻԴԻ

—

Կարդալով «Մշակի» № 229-ում պ. Սագանի գրածը տիկին Կարնօի վերաբերմամբ, որով պ. յօդուածագիրը նախապատրաստում է հասարակութեանը զոհ չը լինել «հնչուն» տիկնոջ խաբեբայութիւններին, մեր կողմից էլ սրտով պարտ ենք համարում հասարակութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել և մի այլ տիկնոջ վրա՝ Կոնստանտինիդի ազգանունով, որը իշխանել է «Վերսալ» հիւրանոցում և տիկին Կարնօի պէս բէկլամ-յայտարարութիւններով կորզում է միամիտ կլիենտների փողերը։

Տիկին Կոնստանտինիդին իր զուշակութիւններն անում է կլիենտի ձեռքի ափի գծերով, ամէն մի սէանսի համար վերցնելով 1 ռուբլի (ուանասունմեկից—50 կոպէկ)։

Ինչ կասած, որ «հիրօմանտիկ» յորջորջվող տիկնոջ միամիտ յաճախորդները, մեծ ժամամբ հասարակ դասակարգից, բազմաթիւ են, որոնցից շատ-շատերը տիկնոջ զուշակութիւնները անձամբ ստուգելուց յետոյ՝ յուսախաբ հեռանում են, զրկվելով իրանց մի մի ռուբլիներից կամ 50 ոսկան կոպէկներից։

Տիկին Կոնստանտինիդին մարդուս անցկալը իբր թէ զուշակելով՝ ասում է մի քանի սովորական խօսքեր—«հիւանդացել ես», «ձեր ընտանիքում որևէ դժբաղդութիւն պատահել է» կամ՝ «որևէ մէկը մեռել է» և այլն, որոնք, ի հարկէ, շատերին կարող է պատահած լինել։

Նոյն տեսակ ափեղ-ցիեղ և ծիծաղաշարժ են տիկնոջ զուշակութիւնները ներկայի վերաբերմամբ.—«էկը հետաքրքրվում է ձեռնով, սիրտարված է ձեզ վրա, դուք նրա հետ ծանօթ չէք, նա կը լինի ձեր ապագայ ամուսինը» և այլն։ Եւ այդօրինակ սիրաշահ խօսքեր «հիրօմանտիկ» տիկինը ասում է իր երիտասարդ կլիենտներին, որոնց թւում պատահաբար զանվում են և ամուսնացածներ, սակայն ի մեծ զմայլութիւն տիկնոջ—ամուսնական նշան-մատանի չեն ունենում հագած իրանց մատին...

Ապագան զուշակելուց էլ՝ տիկին Կոնստանտինիդին իր կլիենտների առաջն է դնում ամէն ինչ—բաղդաւորութիւնների և դժբաղդութիւնների շարքը պատող մի ամբողջ շարան...

Մենք անձամբ ստուգելով այդ «հիրօմանտիկ» տիկնոջ արած զուշակութիւններն ափեղ-ցիեղութիւնները, սրանով նախազգուշացնում ենք Թիֆլիսի հասարակութիւնը հեռու մնալ այդօրինակ հեռագրական կեղծիքներից։

Հ.

Թիֆլիս, 21 հոկտեմբերի

ՏԵՂ ԴԻՒՂԻ ԴԷՊՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

—

Գօրիս, հոկտեմբերի 10-ին

Կարդալով («Մշակ» № 205) պ. Տէր-Սահակեանի յօդուածը, որի անհնազանդ և անհրեակայելի բովանդակութիւնը արձագանք ստեղծ 25 տարեդարձի կրող նամակը, («Մշակ» № 210) և Կարսեցու լուրը (№ 212), ես պարտք համարեցի գնալ և զէպքը ստուգել։ Նաև, թէ տեղիս Դաշնակցութեան կազմը և թէ ես ու ինձ հետ շատ-շատերը, միմիայն լսածում կարդացինք, որ այդպիսի դէպք եղել է Տեղ գիւղում։ Ես, իբրև ոչ կուսակցական մարդ, հետս վերցրի երկու Դաշնակցութեան իրաւասուների և միասին գնացինք Տեղ ամսոս 8-ին։

Գիւղ հասնելով, եկեղեցու բակում ժողով գումարեցինք։ Ներկայ էր ժողովրդի տեսակցութիւն։ Կանչվեցին յօդուածագիր պ. Տէր-Սահակեանը և բաշիբուզուկ Սողոմոնը։

Ժողովի առաջին հարցը 100 ռ. եղաւ, թէ արդեօք նա, ըստ յօդուածի, «Մշակ» թղթատուս համար է եղել, թէ՞ ուրիշ մեզի համար։ Շատ ցաւ ձեռնուց յետոյ երևաց, որ 100 ռ. տուգանք է վերցրած ուրիշ յանցանքի համար, բայց յօդուածագրին ձեռնտու է եղել այդպէս գրել։ իսկական յանցանքը 100 ռ. համար փոխարինվել է՝ թէ ինչու «Մշակ» ես կարդում խնդրին, որը իսկապէս տեղի է ունեցել։ Այդ 100 ռ. տուգանքի համար քննութիւն կը լինի. թերևս այն ժամանակ աւելի պարզ և որոշակի կը լինի յանցանքը ու տուգանքի տեղի-անտեղի լինելը։

Իսկ գաղտ գիւղացի կին Հուռու մերկացրած ծածուկ անդամը ծեծելուն, ամբողջ ժողովուրդը (հակառակ մի քանիսի, պ. Տէր-Սահակեանի հետ) պնդում է թէ սուտ է, այդպիսի բան չէ եղել։ Ըստ գիւղական սովորութեան, ասում էին նրանք, տանուտէրը Սողոմոնի մօտ մարդով մի քանի անգամ խրել է Ռահիմին և նրա կին Հուռուն իսկ բանը ջարդել ծածուկ մարմին ծեծելը չենծու է։ Սակայն ժողովրդական այս ասածների տակ երևում էր ինչ որ զսպված, ամոթիած ճշմարտութիւն, պատուի պատառումը, որ ամէն կերպ այդ ժողովուրդը աշխատում էր ծածկել, ուրանալ։

Տեսնելով, որ դէպքը ճշտելու համար ոչ մի ապեւ խօսք, ոչ մի երդում նշանակութիւն չունի այդ տեսակ ժողովրդի համար, որ բոլորն էլ ձեռքեր են լուանում և ճշմարտութիւնը կղզիացած է մի քանի հոգու մէջ, ես դիմեցի մի այլ միջոցի։ Թագեցի ժողովը և հետս վերցնելով գիւղի ուսուցիչ պ. Մ. Տէր-Դաւիթեանին և զաստիակ տէր-Դանիէլ քահանային, գնացինք ծեծված կնոջ՝ Հուռու մօտ։

Առանց բանութեան, մեղմօրէն, ես 40 տ. Հուռուն խնդրեցի քահանայի, վարժապետի և իմ ներկայութեամբ պատմել իր զլխով անցած դէպքի մանրամասնութիւնը։ Ես ասացի, որ ես ոչ դաշնակցական և ոչ հնչակեան եմ, և քեզ էլ ոչ մի վնաս, պատիժ չէ լինելու։ Մենք ուզում ենք, որ դու ճշմարտութիւնը ասես և քո պատիւը մաքրես։ Պատիւ խօսքը ասելուն պէս նա զղատացած ասաց. «Ախ, երանի թէ ինձ մէնս ճար անէիք, որ էլ երեսիս վատ խօսք չասէին. ուր որ գնում եմ, ասում են ծածուկ մարմինը ծեծվածը եկաւ։ Հուռին պատմել սկսեց. բայց ինչպէսի մանրամասնութեամբ... գրվածը՝ պատմածի 10-րդ մասն է գրեթէ։ Մարդ էր հարկաւոր «ասօթ է եղբայր, ամօթ է, ես ամաչում եմ» ասող և քաշվող կնոջ հարցեր առաջարկել և լսել նրա պատմածի դասն ու լիքի ճշմարտութիւնը։ Պատմածը մի ու մի զրի անել անհարիր և սոսկալի էր։ մարդուն քարացման աստիճանի հասցնող մի դէպք է այդ։

Եւ մարդ արարածը, ժողովրդի ընտրեալ Սողոմոնը, այդքան զարշելի է վերաբերվել դէպի հայ կնոջ պատիւը։ Ամօթ և քէջ, պատժի ժամանակ հրմվող և այժմ ուրացող տաւար ժողովուրդ, բիւր ամօթ։

Մենք եկանք ժողովատեղ. դաշնակցական երկու իրաւասուներն էլ ցանկանալով լսել մեզ պատմածները, նորից դարձանք կնոջ մօտ. այս անգամ տէր-Սիմէօն քահանայի և 5 կողմնակի մարդկանց հետ։ Նախկին պայմանի պէս, խեղճ կինը ուելի վշռացած սրտով նորից պատմեց։ Ափ-ի. իրաւասուները ապշել, մնացել էին քարացած. նրանք զարմանում էին ժողովրդի մեծամասնութեան ուրանալուն վրա։

Ահա թէ ժողովուրդը ինչու էր ուրանում և ասում դէպքը։

Եալ՝ որ Սողոմոնին իրանք զիւղացիք էին ընտրել իրրև ներկայացուցիչ, հետևաբար նրա և իրանց մեղքը ուրիշ չէ։ իսկ եթէ Դաշնակցութիւնը նշանակած լինէր, նրանք կասէին. մենք ինչ մեղք ունենք, ձեր մարդն է մեզաւորը։

Երկրորդ՝ ընդհանուր պատասխանատուութիւնը թոյլ չէ տալիս, որ նրանք մի այդպիսի զզուելի գործ իրանց վրա ընդունեն։

Եւ. երրորդ՝ որ ժողովրդի մեծամասնութիւնը հակառակ և թշնամի է պ. Տէր-Սահակեանին, որ թերևս իր անցեալում վաղխառու և այժմ էլ ունեցող է։

Բայց այնուամենայնիւ մի բուռն ժողովուրդ իրաւունք չունէր հայ կնոջ ոտնատակ առած պատիւը չը բարձրացնելու։

Մենք շնորհակալ ենք պ. Տէր-Սահակեանից, որ իւր 100 ռ. տակ թերևս իր համար մի թառցիկ զէպք, լիլիկ է և այդ զղուելի գործը, և եթէ նա չը զրէր, հաւատացէք, ոչ մի տեղացի քաջութիւն չէր ունենայ այդ մասին բերան բանալու։ Ցանկալի է ամէն մի գիւղում պ. Տէր-Սահակեանի պէս մարդիկ գալու։ Դա մեզ համար է ընդդէմ ամբողջ ժողովրդի, ընկած, խայտառակածների պատուի նախանձախնդիր հանդիսանալն նման զէպքերում։

Այս էլ ասել կուզէ, որ զէպքը կատարվել է Դաշնակցութեան աւելի բարձր մարմնից միանգամայն անյայտ և ծածուկ։ Ինչպէս ասեցինք, նոյնպէս և Դաշնակցութիւնը լրջագոյն է իմացել զէպքի մասին։

Դէպքի մեղքը բարդվում է նախ ժողովրդի վրա, որի ներկայութեամբ ծեծվել է կինը երկրորդ՝ նոգեկոչի, թոռ ու մուրի արժանի Սողոմոնի, որի ձեռքով կատարվել է պատիժը։ Դաշնակցութեան երկու իրաւասուները յայտնեցին ժողովրդին, որ Սողոմոնը այլես դաշնակցական չէ, նա կը պատժվի գաղտնի յետոյ և նրա տեղը նոր մարդիկ կընտրվեն։

Թարին շնորհակալութիւն իրաւասուներին, որ այդպէս ազնիւ, անաչառ վերաբերվեցին գործին։ Վերջացած է գործի քննութիւնը։ թառ ու մուր և բիւր ամօթ Սողոմոնի պէս տարաբախտ, որ կրկնած ծառայի պէս նա հայ կնոջ ենթարկում է դիւական, հրեշաւոր պատիժ։ Նոյն Սողոմոնի ձեռքով կատարվել են մի քանի նման դէպքեր, որոնց մասին մանրամասն հարց ու փորձ արի և նրանք ասելի զարմանալի զոյներ ունեն, քան մերվ մարմին ծեծելը։

Եթէ մեր կատարած քննութեան դէմ բողոքողներ դուրս կը գան, մենք պատրաստ ենք նրանց պատասխանելու ամէն ոք։

Ամօթ և նախատինք զգայմունքով լեցուցած Սողոմոններին. և թող Դաշնակցութիւնը իր պարտքը համարի հայ գիւղերն ապականող Սողոմոնների շարքերը մաքրել, որով թերևս Դաշնակցութիւնը կը մաքրվի իր մեծ պատից։ Դաշնակցութեան պատիւը լիքը Սողոմոնները և տանտեակ ինքնակոչ, թոկից փախածներն են դցել ժողովրդի աչքում, և միմիայն նրանց հեռացնելով կարելի է կուսակցութեան վարկը բարձրացնել գիւղերում։

Պատուագրգիռ բոլոր հայերի թոռը Սողոմոնի գարշելի երեսին։

Ստեփանդարեան

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

—

Տարօրինակ է, չափազանց տարօրինակ է տեսնել, թէ ինչպէս բարկանում, փրփրում ու կատաղում են «Երկրի» խմբագրութեան մէջ նստած այն «մեծ» ու «հանճարեղ» հասարակական գործիչներն ու «տարանցուոր» հրապարակախօսները, իրանց «ամենազօրեղ» մակերեսութեան մէջ պատահած պատակառումներն ու բաժանումները տեսնելով։ Տարօրինակ է, ասում ենք, այն տեսակէտից, որ իսկական հասարակական գործիչը, իսկական և հմուտ հրապարակախօսը հէնց այն ժամանակ միայն կարող է իր դիրքի բարձրութեան վրա կանգնած լինել, երբ մի որևէ խոշոր հասարակական պրոցէս կատարվում է ժամանակ, նա կարողանայ իսկոյն ըմբռնել այդ պրոցէսի ներքին իմաստը, նրա բնական պատճառները և, առանց շուարելու, առանց գլուխը կորցնելու, նրա արժանի գնահատութիւնը անել։ Եթէ նա՝ հասարակական գործիչ-հրապարակախօսը, պատմաբանի անաչառութեամբ ու պաղարիւնութեամբ, կատարվող մեծ պրոցէսի իսկական ու բնական պատճառները քննելուց յետոյ, անկարող է դրանց վերացնել ու պրոցէսի առաջը առնել, նա, գոնէ, պիտի լաւ հասկանայ ու ըմբռնի նրանց և գիտենայ աւելի խորը կերպով թափանցել հասարակական երևոյթի իսկական էութիւնը։

Սակայն անվերջ ու շարունակ իրանց զուլուները զովող և իրանց հասցէին մշտապէս խունկ ծխող զեկավարները, միանգամայն անընդունակ են հասարակական մեծ երևոյթներին լրջութեամբ վերաբերվելու, և շուարած ու գլուխները կորցրած վիճակի մէջ են ընկել ու այլես բոլորովին չեն հասկանում, թէ ինչ են անում իրանք։

Դաշնակցութեան ներկայ զեկավարները, փոխանակ այդ՝ իրանց սրտին մօտիկ մեծ երևոյթի պատճառները լրջութեամբ քննելու, կատաղած հրապարակ են նետվել ու սրա և նրա օձիքից են բռնում, հարայ-հարայ ապազակում, ասելով թէ Դաշնակցութեան մէջ պառակտում ցցողները, նրան անդամահատողները «մշակը» ու նրա մէջ պատահական կերպով ապաստարան գտած Միհրանը, Փելիպոսն ու Կիրակոսներն են։

Կրկնում ենք, տարօրինակ է, չափազանց տարօրինակ է «ինտելիգենտ» շէֆերի այդ վարմունքը, որոնք լուրջ հասարակական զորձիչներ երևալու յատկութիւնը ունեն միշտ։

Եթէ նրանք, իսկապէս, լրջութիւն ունենային ու արժանի լինէին իրանց կոչմանը, պիտի վաղուց զուշակէին ու իմանային, որ, միանգամայն փտած թելերով միմեանց կապված և զանազան բոլորովին պատահական հասարակական զեկքերի ու անցքերի շնորհով ստեղծված և թէկուզ հսկայական զօրութեան հասած, Դաշնակցութիւնը անկարող պիտի լինէր անվերջ իր զրութեան մէջ մնալ ու նա պիտի անպատճառ կազմալուծվէր, հէնց որ այդ պատահական պայմանները, պատմական հանգամանքները, որոնք պայմանաւորում էին նրա գոյութիւնն ու հզօրութիւնը, վերանային կամ փոխվութիւնների ենթարկվէին։

Դաշնակցութեան մեծատարած հասարակական գործիչները մինչև չը գիտեն ու չեն հասկանում, որ ամէն մի խոշոր հասարակական երևոյթ, ինչպէս և ամէն մի խոշոր հասարակական ու քաղաքական կազմակերպութիւն միշտ որոշ պայմանների և շատ լուրջ պատճառների արդիւնք է լինում։ Իսկ հէնց որ այդ պայմանները փոխվում են, պատճառները վերանում, երևոյթն էլ անհետանում է, կազմակերպութիւնն էլ լուծվում է։ Եւ եթէ այս օրէնքը ճիշտ է և ընդունվում է բոլոր հասարակական երևոյթների ու կազմակերպութիւնների համար, նա պիտի ընդունվի և Դաշնակցութեան վերաբերեալ։ Այդ պարագայում պէտք է միանգամայն հաշտվել այն մտքի հետ, որ Դաշնակցութեան մէջ առաջացած ներկայ բէկեցիան մի շատ բնական երևոյթ է։

Մենք աւելին կասենք. Դաշնակցութեան ներկայ բէկեցիան ոչ միայն շատ ժամանակից ու բնական երևոյթ է, այլ և նա սատարվում է։ այդ բէկեցիան տեղի պիտի ունենար սրանից շատ տարիներ առաջ, եթէ միայն մի քանի քաջքշուկ ու պատահական հանգամանքներ չը նպաստէին նրան իր անբնական գոյութիւնը պահպանելու։

Պարզենք մեր միտքը։

Ինչպէս յայտնի է, Դաշնակցութիւնը կազմակերպվել ու հրապարակ էր եկել Տաճկահայաստանի ազատագրական գործը վարելու միտքով։ Եւ, ինչպէս հաւատացնում են, այդ կազմակերպութիւնը իր գործունէութիւնը սկսել է 1890 թուականից։ Բայց յայտնի է և այն, որ Դաշնակցութիւնից մօտ երկու տարի առաջ նոյն միտքով հրապարակ էր եկել մի այլ կուսակցութիւն՝ Հնչակեան կուսակցութիւնը, որի անդրանիկ և ամենամեծ գործերից մէկն էր 1890 թ. յուլիսի 15-ի Պօլսում (Գալատիայում) կատարած առաջին ազգային ցոյցը, որը, կարելի է ասել, սկիզբը դրեց բոլոր յետագայ յեղափոխական շարժումներին և որի ազդեցութեան շնորհով է հէնց, որ սկիզբ առաւ ու կազմակերպվեց Դաշնակցութիւնը։ (Տեսնել է այստեղ փակագծի մէջ ասել, որ տարեդարձներ ու տասնամեակներ կատարելու սիրահար Դաշնակցութեան շէֆերը չափազանց մոռացութեան են տուել հայկական յեղափոխութեան անդրանիկ զոհերին, որոնց խիզախ նախաձեռնութիւնը շատ աւելի արդիւնաւոր հետևանքներ ունեցաւ, քան բանկ Օտոմանն ու Թանկասորը)։

Արդ. Հնչակեան կուսակցութիւնը, որը, այդ անկարելի է ուրանալ, մինչև 1896 թ. Տաճկաստանի բոլոր յեղափոխական շարժումների ամբողջ ծանրութիւնը միաչակ իր ուսերի վրա էր կրում, այդ՝ 96 թուականին յանկարծ մի սոսկալի բէկեցիայի ու ներքին երկպառակումների մէջ ընկաւ, որոնց շատ բնական հետևանքը այն եղաւ, որ այդ՝ ոչ պակաս վիթխարի կուսակցութիւնը քայքայվեց, երկու մասի բաժանվեց ու մինչև այսօր էլ անկարող է նորից ոտքի կանգնել։ Ճիշտ է, այդ կուսակցութեան երկու ֆրակցիաներն էլ դեռ անուանական կերպով քարշ են տալիս իրանց գոյութիւնը, բայց իրապէս նրանք արդէն մի-մի զիակներ են ներկայացնում։

Բայց ինչն էին այդ զօրաւոր կուսակցութեան այդ ձեւով քայքայվելու ու եղբայրասպան սնիրներով ամբողջ աշխարհի առաջ խայտառակվելու իսկական պատճառները։ Մինչև այդ ժամանակվայ և այդ կուսակցութեան մէջ եղած Միհրաններն ու սև-Սեչօները, ինչպէս որ միամտաբար կարծում և հաւատացած էին այն ժամանակ շատերը։ Եթէ զանազան անհատները գերբնական օյժ ունենային մի ձեռքի հարուածով այդպիսի ամրակուռ կազմակերպութիւնը քար ու քանդ անելու նրանք այդ կանէին աւելի առաջ, մի այլ ժամանակ։ Բայց ինչու այդ «չարամտները» հրապարակ եկան ու իրանց քայքայիչ «չարամտութեան» համար պարբտ հող գտան հէնց Թիւրքիայում սկսված հայկական կոտորածներից յետոյ, երբ Նոյնխպէ Սուլթանի կողմից տարեդարձած Մայիսեան բիւրօմների ծրագիրը վերջնականապէս Բոսֆորի ջուրն էր նետված ու հայ ժողովրդի ազատութեան մասին այլևս ոչ մի յոյս չէր մնացել։

Բանն էլ հէնց նրանումն է, որ քանի այդ յոյսը դեռ սատակ վառ էր ամէնքի մէջ, քանի ոչ բոլորն էլ կատարեալս վատահ էին իրանց ձեռնարկած «գործի» շիտակութեան ու աջողութեան վրա, ոչ ոք չէր էլ մտածում քննութեան ասելը ու կրիտիկայի ենթարկել այդ կուսակցութեան ոչ ծրագիրը և ոչ էլ նրա գործունէութեան եղանակները։ Բայց հէնց որ գործը անաջող ելք ունեցաւ, հէնց որ բոլորն էլ նկատեցին, որ հայ ժողովրդի յոյսը շինելու փոխարէն խփել են նրա աչքն էլ են հանել, այն ժամանակ այս կուսակցութեան մէջ բոլորն էլ զգաստացան ու ձգտեցին միմեանց մէջ այդ գժբաղդութեան իսկական տեղն ու պատճառները որոնել։

Դա մի շատ բնական երևոյթ էր և այլ կերպ չէր էլ կարող լինել։ Հնչակեան կուսակցութեան նպատակը կազմող «գործի» մանրակրկիտը անհրաժեշտօրէն ու հետևողական պիտի մանրակրկիտ տաղացնէր և այդ կուսակցութեան մէջ, որ և եղաւ։

Սակայն ինչու նոյն մանրակրկիտն ու նոյն քայքայումը այն ժամանակ տեղի չունեցաւ նաև Դաշնակցութեան մէջ։ Զէ՞ որ սա էլ միևնոյն մանակացած «գործի» համար էր հրապարակ եկել ու, ինչպէս այժմ մեզ հաստատում են, 1890 թուականից այդ «գործովն» է զբաղվել։

Բան էլ չունի։ Դաշնակցութիւնը, որ ամենայն զգուշութեամբ, ամենայն զգաստութեամբ, ամենայն զգուշաւորութեամբ, ամենայն զգաստութեամբ, ամենայն զգաստութեամբ, ամենայն զգաստ

մաձայն, քաղաքային վարչութիւնը որոշել է միջնորդութիւն յարուցել ֆինանսների մինիստրութեան առաջ՝ տալ քաղաքին պետական գանձարանից կարճ ժամանակավորապես 500 հազար ռուբլու փոխատուութիւն։

—

Հոկտեմբերի 22-ին ցերեկվայ, ժամը 2-ին Աւճալեան փողոցով անցնող ձիաքարշի մէջ նստած օղիի «Ректификатъ» գործարանի տեսուչ Միքայէլ Ս. Բաղդասարեանի վրա յարձակվել են 6 զինված չարագործներ, խլել են դրանից ոսկէ ժամացոյցը և 4500 ռուբլի փող։ Բացի զրանից տարբանակներով խլել են գլխին և ցրվել երեքը Կուլուսբէկովի տուն են մտել, իսկ այնտեղից դուրս գնացել Տումանովսկայա փողոցը, իսկ միւս երեքը փախել են զանազան փողոցներ։ Բաղդասարեանի ասելով, չարագործները ռուսներ և իմերեներ են եղել։

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը թոյլատրել է «Թիֆլիսի կանանց աշխատասիրութեան «Մեղու» տունը հիմնող ընկերութեան» հիմնադրութիւնին հոկտեմբերի 29-ի ժամի 11-ին Զիգրաշէնի ծխական դպրոցում գումարել ընկերութեան ընդհանուր նիստը վարչութեան վերատուղող յանձնաժողովի անդամներ ընտրելու, նոյնպէս ընթացիկ գործերի մասին խորհրդակցելու համար։

—

Գանձակի նահանգից հաղորդում են, որ Նուխու գաւառում աւազակային յարձակումները վերջին ժամանակներս շատանալու պատճառով, տեղական գեներալ-նահանգապետի անմիջական ղեկավարութեամբ խիստ միջոցներ են ձեռք առնվում աւազակներին ընկնելու համար։ Այդ միջոցները գլխաւորապէս կայանում են նրանում, որ տուգանքների ենթարկվում ու կալանաւորվում այն ազդեցիկ ու պատուաւոր նուխեցիները, որոնք որևէ կերպով աջակցում են աւազակներին։ Դրա շնորհիւ էր, որ արդէն ութ աւազակներ յանձնված են կառավարութեանը և երկու աւազակային պարալլելներ էլ, Իսկանդար Մամէդ-օղլին և Աբդուլ Թիրիմ-օղլին, իրանց յօժար կամքով եկան ներկայացան կառավարութեանը։

—

Թելաւի գաւառի Իսկայլոս գիւղի բնակիչ Շիո-Պոդկովելի Մեղրվելու վրա, որ ներկայումս քաղաքական գործերի պատճառով ադմինիստրատիվ կարգով աքսոր է ուղարկված Ախալցխայի գաւառը, կասած է ընկնում, որ հոկտեմբերի 1-ի գիշերը կողոպտել է ուսուցիչ Բիբիլաուրին և հոկտեմբերի 7-ին էլ ուղեցել է կողոպտել հոսվմէական—կաթոլիկ քահանայ Պաուէլ Կալայցիվին, և ընդհանրապէս հատատվել է նրա անբարեյուսալի լինելը։ Ուստի յիշեալ Շիո Պոդկովելի Մեղրվելուն, համաձայն զինուորական դրութեան կանոնների, որոշված է բանտարկել Ախալցխայի գաւառական բանտում և նրա մասին քննութիւն սկսել։

—

Երէկ, հոկտեմբերի 24-ին, ժամի 1½-ին տեղի ունեցաւ Ցիցիանովի վերելքի ելէքտրաքարշի բացումը։ Ներկայ էին քաղաքապլուները, քաղաքային վարչութեան անդամները՝ Մաստիսեան, Կոկչայէվ և անօրիմ ընկերութեան գլխաւոր կառավարիչ Ֆայս։ Տոմսակներից ստացված առաջին մուտքը յատկացված էր անօրիմ ընկերութեան ծառայողների դրամարանի օգտին։ Մուտք, ինչպէս ենթադրում են, հաւաքված պէտք է լինի մօտ 100 ռուբլի։

—

Հոկտեմբերի 21-ին կայացած քաղաքային վարչութեան ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութեան մէջ քննվել է քաղաքային գանձարանի ֆինանսական դրութիւնը։ Վարչութիւնը զեկուցել է ժողովին, որ 1904 թ. և 1905 թ. նախահաշիւների համաձայն ծախսվել է աւելի, քան չէ կատարած աշխատանքների համար յատկացրած 400,000 ռ. 1901 թ. մուտքերի նախահաշուի համաձայն գանձարան չէ մտել 6007 ռ. աւելի, այս տարի մինչև հոկտ. 1-ը չէ ստացվել մօտ 300,000 ռ., բացի զրանից փողոցները քարելու համար անկախ որոշած գումարից—ծախսվել է մօտ 70,000 ռ., գործազուրկների համար հասարակական աշխատանքներին—մօտ 110,000 ռ. քաղաքային մասի խնայողներից ստացվել է միայն մօտ 80,000 ռ. հէնց այս թուերից էլ կազմվում է քաղաքի դէֆիցիտը։ Ի նկատի առնելով ժողովի ոչ լրիւ լինելը, վարչութեան զեկուցման առիթով որոշ մի վճիռ չէ կայացրել։

—

Քաղաքային զինուորական տեսանում մինչև հոկտեմբերի 23-ի ժամը 2 ը ընդունվել են 150 նորակոչներ։ Ընդամենը պահանջվում է Թիֆլիսից 234 հոգի։

—

Թիֆլիսի Հայուհեաց որբանոցի ընկերութեան օգտին ստացանք ուսանող Արտաւազդ Մ. Փ.-ից ժողված իր ընկերների շրջանում 5 ռ., 10 կ.։

—

Թիֆլիսի գաւառի Վարդեսի և Տաբարուի գիւղերի մէջև, հոկտ. լույս 19-ի գիշերը, ինչպէս մեզ հաղորդում են, 6 զինված չարագործներ յարձակվում են Կալմախլիձէ եղբայրների ձիերի և ջորիների երամակի վրա, որ նոր էր դուրս եկել քաղաքից, և քշողներին սպանելով հրացաններով, տանում են 4 ջորի և երկու ձի։

—

Քութայիսի նահանգից հաղորդում են, որ մօտ օրերս Նաուշաւանս գիւղում 5 զինված անյայտ չարագործներ յարձակվել են գիւղացի Գէօրգի Բութաթէլաձէի տան վրա և մահվան սպառնալիքով ստիպել են վերջինին և նրա կնոջը յանձնել տան իրերը և փող, ընդ. 336 ռուբլի։ Ցարձակվողներից 2-ը եղել են տեղացի գիւղացիներից, որոնցից մէկը, Զագի Բագան, արդէն ձերբակալված է։ Մնացածներին բռնելու համար միջոցներ են ձեռք առնված։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի կարգադրութեան համաձայն Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանի պարապմունքները վերսկսվելու են նոյեմբերի 1-ից։ Այդ ժամանակ պէտք է երեխաների ծնողները իրանց երեխաների հետ գան ուսումնարան և մտցնեն ուսման վճարը։ Իսկ II և III դասարանների բացման հարցը լուծելու մասին կազմվելու է յատուկ մասնաժողով, որը և կը քննէ արձակված աշակերտների յանցաւորութեան գործը։

—

Հոկտեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 6-ին 6 անյայտ զինված չարագործներ յարձակվել են պարսմի տնակի վրա, (Մուխրանսկայա փողոց) և մռնված սպանելիքով վերցրել են զանձարկղից 21 ռ. 82 կ. փող և անյայտացել։ Զարագործները եղել են սև և մախրագոյն չիրեխակներով և զինված տարբանակներով ու դաշոյններով։

—

Վերջին ժամանակներս ուրբաթական Ռուսատանի հոգևորականութեան մէջև նկատվում է շարժում, որով հոգևոր կեանքը հետզհետէ պրոգրեսսիվ ուղղութիւն է ստանում։ Ինչպէս երևում է հովուական համագումարների օրաթերթերից, եկեղեցական ժողովի գաղափարը, իբրև հոգևոր կեանքի հիմք, գրաւել է ռուս հոգևորականութեան մեծամասնութեան համակրանքը։ Հոգևոր յետադիմականների թիւը արագութեամբ պակասում է։

(«Т. Л.»)

—

Ամենահատատ աղբիւրից հաղորդում են «Н. П.» լրագրին, որ երկաթուղային դաշնացութեան կենտրոնական յանձնաժողովը առաջարկել է ճանապարհների յանձնաժողովներին հեռքել ծառայողների մէջև տարածված այն լուրը, իբր թէ մօտ ապագայում տեղի կունենայ երկաթուղային գործադուլ։

—

Լուր է պատում, որ Պետերբուրգում զինված յարձակման ժամանակ զոհացված փողերի տեղը ցոյց տալու համար վճռված է 36,000 ռուբլի պարգև տալ։ («Нов. Вр.»)

—

Խարկովից հաղորդում են «Рѣчь»-ին, որ համալսարանի ռեկտորն ու պրոֆեսսորները տեղական «ռուս ժողովրդի միութեան» բաժանմունքից սպառնական նամակներ են ստացել նրա համար, նախ՝ որ նրանք թոյլ են տալիս համալսարանի շինութեան մէջ յեղափոխական ժողովներ գումարել և երկրորդ՝ որ յարգել են անցեալ տարվայ հոկտեմբերի օրերում ընկած զոհերի յիշատակը պարապմունքներ մի օր ընդհատելով։ Նամակ ստացողները զիմել են տեղական ադմինիստրացիային և պահանջել ազատելու իրանց խուլիգանական այդ քայլերից։

—

Իսկական ռուս մարդկանց դաշնակցութեան Վլադիվավկազի բաժինը, ինչպէս հաղորդում են «Т. Л.» լրագրին, վճռել է հրատարակել սեփական կուսակցական լրագիր։

—

Հոկտեմբերի 18-ին Պետական Դումայի նախագահ Ս. Մ. Մուրոմցեվը կոչված է եղել դատաստանական գործերի գլխաւոր քննիչ Բէլիցկիի մօտ հարցաքննութեան համար, որը ոչ մի նորութիւն չէ տուել գործին։

—

Բուլի դաւառական զեմստվային վարչութեան նախագահ Ա. Ցիբուլսկին առաջարկութիւն է ստացել Մոսկվայի նահանգապետից հրաժարվել ժողովրդական ազատութեան կուսակցութեան Բուլի կոմիտեի նախագահի պաշտօնից, հակառակ դէպքում նա չի հասատատվի գաւառական զեմստվոյի վարչութեան նախագահի պաշտօնում։ Այդ պահանջը նահանգապետը հիմնում է ներքին գործերի մինիստրի յայտնի շրջաբերական վրա, որին պարտաւոր են ենթարկվել զեմստվային ծառայողները։

—

Ֆինլանդների մինիստրը Պետական Դումայի ընտրութիւնների համար յատկացրել էր 500 հազար ռուբլի։ Ներքին գործերի մինիստրը անցեալ ամիս միջնորդել էր, որպէս զի լրացուցիչ գումար ևս տրվի նոյն նպատակի համար՝ 500 հազար ռուբլի։ Հոկտեմբերի 16-ին ֆինլանդների մինիստրութիւնը հաղորդում է, որ նա արդէք չունի այդ միջնորդութեան հակառակ։ Այդպիսով նոր ընտրութիւնները կազմակերպվելու համար կառավարութիւնը յատկացրել է 1 միլ. ռուբլի, որ 400,000 ռ. աւելի է, քան առաջին Դումայի ընտրութիւնների համար յատկացրած գումարը։

—

Պետերբուրգի ոստիկանութիւնը տեղեկութիւններ է ստացել, որ զինված յարձակում գործողները պատանում են Մոսկվայի ռազմիկ կազմակերպութեանը և Պետերբուրգի կազմակերպութեան ներկայացուցիչների հետ միասին մշակել են գործողութիւնների եղանակը։ Կազմակերպութիւններից մասնակցողների թիւը հաշվում են 150 հոգի։ Դրամները տանող կինը, ոստիկանական գործակալներից շատերի կարծիքով, կնոջ հագուստ հագած տղամարդ է եղել։ Նոյնն են վկայում մի քանի վկաներ ևս, որոնք հաւատացնում են, որ կինը տղամարդու սև դէմք ունէր։ Հոկտեմբերի 17-ին յայտնի է դարձել, որ 366 հազար ռուբլիները տանող կինը բռնվել է կամենկից կղզում։ Լիակատար հիմք կայ կարծելու, որ կողոպտված փողերը կը գտնվեն։

—

Պետերբուրգի քաղաքային դպրոցների ուսուցիչները առաջներում Պետերբուրգի համալսարանի ռեկտորին ներկայացրել էին մի խնդիրք ուսուցչական ինստիտուտները աւարտողներին Պետերբուրգի համալսարանի ուսանող ընդունելու համար։ Ռեկտորը այդ խնդիրքին վերին ատիճանին համակրանքով վերաբերվել և հաղորդեց, որ պրոֆեսսորների խորհուրդը այդ հարցին արդէն դրական լուծում է տուել և մտադիր է այդպիսիներից պահանջեց միայն լրացուցիչ քննութիւն տալ լատիներէնից և նոր լեզուներից որևէ մէկից։ Սակայն այդ հարցը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից վերջնականապէս չէ լուծված։ Պետերբուրգի ուսուցիչների կողմից ընտրված պատգամաւորները այսուհետև էլ շարունակելու են աշխատել այդ հարցի համար։

—

«ԲԵԿ» լրագիրը հաղորդում է, որ պարիզեան մի քանի լրագրներ լուր են տարածել, որ մինիստր-պրեզիդենտ Կլեմանսոյի դէմ դաւադրութիւն է բացվել։ Հաւասի գործակալութիւնը այդ լուրը եռանդով հերքում է։ Միևնոյն Կլեմանսոյի վերաբերմամբ «Boersen Geitung» լրագիրը առաջ է բերում պաշտօնական շրջանների մի շատ հետաքրքիր կարծիք։ «Փրանսիան ներկայումս, ինչպէս երևում է, մի շատ վտանգաւոր փորձ է ուզում անել։

—

Մոսկվայի ադմինիստրացիան շարունակում է ջնջել վերածնվող պաստ-հեռագրական դաշնակցութիւնը։ կալանաւորվում են նրանք, որոնց վրա կասկած կայ, որ անդամ են։ Հոկտեմբերի 16-ին կալանաւորվել են առաջին դաշնակցութեան նախկին գործիչներ պաստ հեռագրական պաշտօնեայ Բոգէ, Զերվինսկի և Դեպէշով-Տարասով, որոնք մի անդամ արդէն բանտ էին նստել յունվարից սկսած մինչև յունիս։

—

Պետական Դումայի նախկին պատգամաւոր Օնիպկոյի վերաբերմամբ զինուորական դատարանի կայացրած դատավճռի դէմ դատախազի տուած վճռաբեկ բողոքը անհետևանք թողնելուց յետոյ, դատավճիռը իրագործվելու է։ Մօտ օրերս Օնիպկոյին ուղարկելու են իր աքսորատեղին։ Օնիպկոյի մի ուրիշ գործը քննվելու է Ստաւրօպոլում. դրա համար ուզում են նրան տեղափոխել այնտեղ, բայց այդ խնդիրը դեռ ևս վերջնականապէս չէ որոշված։

(«Сегодня»)

—

Մոսկվայի մանկավարժական ժողովում նոյեմբերի սկզբներում կազմակերպվելու են դասախօսութիւններ մանկավարժական հոգեբանութեան և դաստիարակութեան հարցերի մասին, որի համար հրաւիրված են Պետերբուրգից և Մոսկվայից դասախօսները։

—

Ֆինլանդական երկաթուղու Պետերբուրգ-Վիբորգեան գծի գնացքների ծառայողներից 10 հոգի հրաման էին ստացել ներկայանալու Պետերբուրգի նահանգական դատարանին, ուր նրանց հարցաքննութեան ենթարկեցին Պետական Դումայի արձակումից յետոյ պատգամաւորների Վիբորգ գնալու մասին։ Երկաթուղու ծառայողներից աշխատում էին իմանալ թէ ինչ էին խօսում պատգամաւորները վագոններում, վերադառնալիս թուղթիկներ էին բաժանում նրանք վագոններում, թէ ոչ հարցաքննութեան հետևանքը այնքան էլ փայլուն չէր, որովհետև ֆինլանդացիները պատասխանեցին, որ իբրև ֆինլանդական երկաթուղու ծառայողներ, նրանք իրանց պարտաւոր չեն համարում այդ տեսակ հարցերի պատասխանել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 հոկտեմբերի։ Վառելանիթի մասին տեղի ունեցած ժողովում Մոսկվայի բօրսային ընկերութեան ներկայացուցիչը ընկերութեան անունից յայտնեց, որ արդիւնաբերական կեանքի մէջ հանգստութիւն չի տիրի, մինչև որ չիրագործվին պրոֆէսիոնալական միութիւնները, և մինչև որ բանվորները չին կազմակերպի իրանց սեփական լայն ընկերութիւնները։

ՄԻՆՍԿ, 22 հոկտ.։ Զինուորական-դաշտային դատարանը գիւղացի Շալային կողոպուտի համար դատապարտեց մահվան—կախաղանի մէջտեղ։

ԼՕՆԴՈՆ, 22 հոկտ.։ Ծովապետ Բօստրէմայի հրամանատարութեամբ էսկադրան ժամանեց Գէյլէմ։ Օֆիցէրները մտադիր են այցելելու Բարրու և Շէֆիլտ տեսնելու այն գործարանները, որոնք պատրաստում են զրահներ և թնդանօթներ։

ԼԻԲԱՒԱ, 22 հոկտ.։ «Kieвъ», «Гродно» և «Сергѣй» շոգենաւերով Ամերիկա գնացին 987 գաղթականներ։

ՏՈՒՐԿՈՒԷՆ, 22 հոկտ.։ Դեղին սէրգիկատների միութեան նախագահ՝ պատգամաւոր Բիէտրի ժողովում ճառ արտասանելու ժամանակ ներս խուժեցին նրա հակառակորդները։ Տեղի ունեցաւ մեծ ընդհարում. ատրճանակներից մի քանի անգամ կրակեցին. վիրաւորվեցին երկու հոգի։ Դրսում կանգնած ամբոխը ջարդեց ապակիները, որի ժամանակ նորից տեղի ունեցան մի շարք տրաքոցներ։ Մի քանի հոգի կալանաւորվեցին։

ԲԵՐԼԻՆ, 22 հոկտ.։ Ցերեկվայ ներկայացման ժամանակ Բուլայի կրկեսում, գաղանները զսպող Պետրոսը, որը ցոյց էր տալիս 10 վագրեր և ուրիշներ—սայթաքեց, գաղանները յարձակվեցին նրա վրա և ջարդուածքներ հասցրին, այն ժամանակ գաղանատոցը ներս մտան նրա չորս օգնականները՝ գաղանները քշեցին երկաթեայ ձողերով և ատրճանակի տրաքոցներով։ Պետրոսը դուրս եղաւ գաղանների վանդակից և երեք անգամ ներկայացաւ հասարակութեան առաջ, որից յետոյ ուշաթափ ընկաւ։ Հասարակութիւնը, որը մեծ մասամբ բաղկացած էր երեխաներից (?) դէպքի ժամանակ մեծ իրարանցման մէջ ընկաւ, բայց շնորհիւ ծառայողների ձեռք առած միջոցների — հանգստացաւ։ Ներկայացումը շարունակվեց։

ԼՕՆԴՈՆ, 22 հոկտ.։ Հալւում նախնական ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցած անկարգութիւններից յետոյ, վեց հոգի ուղարկվեցին հիւանդանոցը, իսկ քառասուն հոգի ձերբակալվեցին։

24 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 հոկտեմբերի։ Համալսարանի ռեկտորին հրամայված է, որ համալսարանում տեղի ունեցող ժողովները կողմնակի անձանց մասնակցութեամբ, որտեղ քաղաքական կուսակցութիւններից մէկի ֆրակցիան էկսպրոպրիացիայի հարցի մասին զաղտնի ժողովներ է ունենում—այդպիսի երևոյթների շարունակութեան կը հետևի համալսարանի փակումը։ Համալսարանի ռեկտորը քաղաքապետից ստացաւ մի կարգադրութիւն, որով հրամայվում է ամեն միջոց ձեռք առնել, որ հոկտեմբերի 23-ի ժողովը չը կայանայ։ Ռեկտորը քաղաքապետին պատասխանեց, որ նա ժողովը թոյլատրել է, որը ուսանողական խաղաղ ընտրութիւն է կրում և որից ոչ մի անկարգութիւն չէ կարելի սպասել։ Քաղաքապետը մի հրամանագրով կարգադրեցին արից, որ բոլոր հրաւիրեալները և ունկնդրողները, որոնք մայրաքաղաքում ընակվելու իրաւունք չունեն—արտաքսվեն քաղաքից։

ԵԼԱՌՈՒԻԳԱ, 23 հոկտեմբերի։ Զ մասվային ժողովը ընդունեց երկու սեռի ընդհանուր տարրական ուսման հարցը և որոշեց դաւառում բանալ երեք նոր ուսումնարաններ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 23 հոկտեմբերի։ Վոլգայի տպարանում գործադուլը շարունակվում է։ «Нижегородскій Листокъ», «Нижегородская Биржа և «Судоходецъ» լրագիրները լոյս չեն տեսնում։ Եթէ գործադուլը շարունակվի, այն ժամանակ «Ниж. Листокъ»-ը իր գոյութիւնը կը դադարեցնէ։

ԴԵՐԲԻՇՆ, 23 հոկտեմբերի։ Ասաղկների մի խումբը կողոպտեց հողաչափական մասնաժողովին, որ չափում էր արքունական հողերը։ Խլված են բոլոր փողերը։ Մասնաժողովը վերադարձաւ Թիֆլիս։

ՎԱՐՇԱՒԱ, 23 հոկտեմբերի։ Զինուորական-դաշտային դատարանը մահվան դատապարտեց Սամսիսլաւ Կլոսսին, որը հոկտեմբերի 10-ին մսագործ Պիվնիցկէրի կեանքի դէմ մահափորձ կատարեց և հետապնդման ժամանակ սպանեց մի անցորդի։

ՄՈՍԿՎԱ, 23 հոկտեմբերի։ Երէկ երեկոյան կողոպտիչները մտան Լուկիանովկի անապատի միաբանականների վանքը. սպանեցին վանահօրը, վիրաւորեցին ծառային, և խլելով եկեղեցու ամրողջ իրերը և փողերը, անյայտացան։ Կողոպտիչները 7 հոգի էին, որոնցից 3 ը ուսանողական հագուստով էին։

ՊԵՏԵՐՀՕՖ, 27 հոկտեմբերի։ Գիշերը Ցերկօշի փողոցում այրվեց մի տուն։ Հրդեհի ժամանակ այրվեց այնտեղ ընակվող այրի Գրիգորիվնան. այրվեց 15,000 ռուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 հոկտեմբերի։ Սարատովի նահանգի ուժեղացրած պահպանութեան ժամանակը երկարացվում է մինչև 1906 թ. հոկտեմբերի 29-ը։ — Ժամանեց աւստրիական արտաքին գործերի մինիստր Բարոն Էքսենդալը։

ՎԼԻՌՕՐԴ, 22 հոկտեմբերի։ Երեք զինված չարագործներ կայարանի մօտ կողոպտեցին երկաթուղային կասսիրին, տանելով 74,000 մարկ։ Ոստիկանութիւնը բռնեց երկու կողոպտիչների, որոնք ֆինն բանուորներ էին։ Փողերը գտնված են։

ԼՕՆԴՈՆ, 23 հոկտեմբերի։ «Դէյլի-Տելեգրաֆիֆ» Տօկիոյից հաղորդած տեղեկութիւնների համաձայն, կայսեր ծննդեան տօնի առիթով տեղի ունեցած զօրահանդէսների ժամանակ արտասահմանեան մամուլի ներկայացուցիչներին թոյլ չը տուին որ ներկայ լինեն։ Պատճառը—վերջին ժամանակներս արտասահմանեան մամուլում երևացած հեռագիրները և յօդուածներն են, որոնք քննադատում էին Եապօնիայի քաղաքականութիւնը Մանջուրիայում և Կորէայում. դրանք եապօնական իշխանութիւնների համար վիրաւորական են թուացել։

ՄԻՆՍԿԻՆ, 24 հոկտեմբերի։ Վոլգայում սառոյցը երևան եկաւ։

ԼՕՐԻԱՆ, 23 հոկտեմբերի։ «Բէն-Դէրիգուբնս» նաւը Գրուա կղզու մօտ խորասուզվեց, նաւի նաւաստիների կազմից հինգ հոգի խեղդվեցին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵՍ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ
ԹՈՎԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մասնաւոր հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վերաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԳԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ց. Գուրգանով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահաս.։
Ա. Գ. ԱՌԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօն սուլտատի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ ԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. / երեկոյեան 6—7 ժ.
ՏԵԼԵՖՕՆ № 1087
Օլօլակ, Լերմօնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 36—150

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(Կ.չ.ու.) 12—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ մեզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպեկտի և Կուչեասկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարետնի փողոցից № 2
(ա. օ.) 264—300

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փոխադրների միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօտային	Մարդատար.	Արագ.	Ապրան. գ.
Բաղուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ
Թիֆլիսից դուրս գալը.	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաքու հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաքուից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գ.գ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցերը.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը.	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցերը
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցերը.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցերը.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը.	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը).	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ

200—300 ՐՈՒԲԼԻ
ԱՄՍԱԿԱՆ
աշխատում է իւրաքանչիւրը, ով կընդունէ մեր գործակալութիւնը։ Առանձին մասնագիտութիւն չէ պահանջվում։ Առաջարկութիւնը, ներփակելով 10 կօպէկանոց նամակադրոշմ պատասխանի համար, բարեհաճեն ուղարկել՝ Маннгеймъ, Германія, почт. ящ. № 278.
Mannheim, Postfach 278.
(չ. կ. հ.) 1—3

Երևանի Հայոց Թեմական դպրոցի հոգաբարձութիւնը
յայտնում է, որ Թիֆլիսի Հայոց Նախկին Հրատարակչական Ընկերութեան դպրոցին նուիրած գրքերը վաճառում է զեղչով գնել ցանկացող գրավաճառներին, ուսուցիչներին և գրագարաններին 50% զիջումով։
Ցանկացողներին կուղարկվի նոյն գրքերի տպագրված ցուցակը։
Դիմել Հոգաբարձութեան հասցէով։
1—5

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մանանգէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններու։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8; կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկիվիչի փողոցների,, № 33/15։
(ա. օ.) 38—100

մի հայ վարժուհի
ընդունում է իր մօտ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
և
ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ
տալիս է սենեակ, ճաշ և պարապում է։
Գները ժամտչելի են։
Հասցէն՝ հարցնել «Մշակի» խմբագրատանը
Նոյն ընտանիքում տրվում է ՃԱՇ։ 2—5

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“
Պատկեր հայ-թուրքական կռիւներից
(24 երես)
ԳԻՆԸ 7 ԿՕՊ.
Դիմել Թիֆլիսի գրախանութներին։
ԳՈՒՄԱՐՈՎ ԶԵՂՉ
2—5

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ա. Վ. ԴԱՆԻԷԼԵԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՄՈՂՆԵՐԻՆ
Հասցէն՝ Орловская 5. 3—5

Գ. Ե. ԱՒՍԱՐԴԻՍՕՎԻ
ԱՑԳԵՏՆԿԱՐԱՆԸ
բաց է թողնում պղտատու ծառեր արտասահմանեան, ռուսաց և կովկասեան տեսակի։
Հասցէն՝ կայարան Սկրա (ст. Скра зак. ж. д. Авсаркисову։ Կատալոգը ուղարկվում է ձրի։
9—10

Լոյս տեսաւ
ՋԻՄՄՍ ՄՕՐԻԷՐԻ
ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ
ԱՆԳԼԻԱՑՈՒՄ
վէպ պարսկական կեանքից
հատոր երկրորդ
(320 երես)
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
«Հաջի Բաբայի» երկու հատորի գինն է 3 ր. 50 կօպ (720 երես)։ «Մուրճի» տարեկան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում և 2 հատորի համար ուղարկում են միայն 2 ռուբլի։
10—10

Լոյս տեսաւ
Հայի Տէր-Աստուածատրեանցի
Հայ վաճառականութիւնը
Թուսիայում
Գինը 50 կօպ.
Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին և կամ Тифлисъ, Айку Теръ-Аствацатряну, Панасевича улица № 1.
Հեղինակին դիմողը ճանապարհածախս չէ վճարում։
3—4

Փորձված Ուսուցչուհի
որոնում է մանաւոր ԴԱՍԵՐ։
Հասցէն՝ «Մշակ»-ի խմբագրատանը։
7—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԳԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հեռա